

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԵԱԼ «ՄԱՍԱՄԲ ԱԶԱՏ» ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ

Միջազգային Իրաւապաշտպան «Ազատութեան Տուն» (Freedom House) կազմակերպութիւնը հրապարակեց ամենամասնագատ պետութիւններու իր տարեկան ցուցակը:

«Վատագոյններուն մէջ վատագոյնը 2012. Աշխարհի ամենահալածեալ հասարակութիւնները (Worst of the Worst 2012: The World's Most Repressive Societies) խորագիրը կրող գեկոյցին մէջ աշխարհի 195 պետութիւնները դասակարգուած են որպէս «Ազատ», «Մասամբ ազատ» եւ «Անազատ» պետութիւններ:

Հայաստան, ինչպէս նախորդ տարիներուն, դասուած է «մասամբ ազատ» պետութիւններու շարքին: Քաղաքական իրաւունքներու համար Հայաստան ստացած է 6 կէտ, իսկ քաղաքացիական իրաւունքներու համար 4 կէտ:

Վրաստան եւ Թուրքիա նոյնպէս «մասամբ ազատ» պետութիւններու շարքին են: Իսկ Ատորպէյճան, Ռուսաստան եւ Իրան կը գտնուին «անազատ» պետութիւններու շարքին:

Զեկոյցի համաձայն, աշխարհի ամենամասնագատ պետութիւններն են Հասարակածային Կուլինիան, Էրիթրեան, Հիւսիսային Գոթլան, Սէլուական Արապիան, Սոմալը, Սուտանը, Սուրիան, Թուրքմենիստանը եւ Ուզբեկստանը:

Ամենաազատ պետութիւններն են Աւստրալիան, Աւստրիան, Պելճիքան, Գանատան, Կիպրոսը, Չեխիան, Տանիմարքան, Ֆրանսան, Գերմանիան, Իսլանտան, Իռլանտան, Իտալիան, Լիտվիան, Լիւքսեմպուրկը, Հոլանտան, Նոր Զելանտան, Նորվեգիան, Սլովակիան, Սլովենիան, Սլովակիան, Շուէտը, Զուիցերիան, Մեծ Բրիտանիան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

«ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՊԻՏԻ ՅԱԶՈՐԴԵՐ ՕՐՅԱՆ ՓԱՄՈՒՔԸ».- ԵԱՍԻՆ ՀԱԵԱԼ

Հայաստանեան «Թերթ» կայքէջը կը տեղեկացնէ, որ Հրանդ Տինքի սպանութեան համար ցմահ ազատազրկման դատապարտուած Եսային Հանալ հարցազրոյց տուած է թրքական «Թարաֆ» օրաթերթին: Ան պատմած է, որ սպանութեան պատուիրատուներէն էր հան թունճելը իրեն ըսած է, որ թուրք զազին համար երկու վտանգաւոր անուն կայ՝ Հրանդ Տինք եւ Օրհան Փամուք: Թունճել նշած է, որ առաջին անգամ պէտք է սպաննել Տինքը:

Մար. ք էջ 4

ՀԵՐՄԱՆ ՎԱՆ ՌՈՍԲՈՅ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԿՈՉ ԸՐԱՄ՝ ԶՕՐԱՑՆԵԼՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՐԳԵԼՈՒ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Եւրոպական խորհուրդի նախագահ Հերման վան Ռոսբոյ Յուլիս 4-ին, Երեւանի մէջ նախագահ Սերժ Սարգսեանի հետ իր ունեցած հանդիպումէն ետք կայացած միատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին, կոչ ըրաւ Հայաստանին՝ զօրացնելու իր ժողովրդային հաստատութիւններն ու յարգելու մարդու իրաւունքները:

«Ես կ'ողջունեմ Հայաստանի յանձնառութիւնը եւրոպական արժէքներուն, չափանիշներուն ու ցուցանիշներուն համապատասխան յառաջընթացներ արձանագրելու համար: Այդ ուղիով արական ընտրութիւն է Հայաստանի համար: Ես կը խրախուսեմ Հայաստանը շարունակելու այդ ճանապարհին վրայ իր ժողովրդավարական հաստատութիւնները զօրացնելու եւ վերացնելու կաշտակերութիւնը, յարգելու մարդու իրաւունքները, խօսքի ազատութիւնը: Դուք ճիշդ ճանապարհի վրայ էք, բայց ապագային շատ բան կայ դեռ ընելու», - ըսաւ Ռոսբոյ:

Ասուլիսի ընթացքին վան Ռոսբոյ յայտարարեց, որ Եւրոպական Միութիւնը Հայաստանին տրամադրուող օգնութիւնը պիտի աւելցնէ 25%-ով՝ հասցնելով մինչեւ 15 միլիոն եւրո:



Եւրոպական խորհուրդի նախագահ Հերման վան Ռոսբոյ Երեւանի մէջ նախագահ Սերժ Սարգսեանի հետ կայացած մամլոյ ասուլիսի ժամանակ

նէ 25%-ով՝ հասցնելով մինչեւ 15 միլիոն եւրո:

«Մենք սկսած են խորունկ եւ համապարփակ ազատ առեւտուրի գոտիի համաձայնագրի շուրջ բանակցութիւնները: Փետրուարէն սկսան մուտքի արտօնագրերու հեշտացման գործընթացը: Այդ ոգիով ես այստեղ կը յայտարարեմ, որ Հայաստանին մեր օժանդակութիւնը 25%-ով պիտի աճի եւ դառնայ 15

միլիոն եւրո եւ այդ օգնութիւնը պիտի օգտագործուի հիմնական բարեփոխումներուն աջակցելու համար՝ Հայաստանին ընկերակցութեան ճանապարհին օժանդակելու նպատակով», - ըսաւ Ռոսբոյ միատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին:

Վան Ռոսբոյ նաեւ յայտնեց, որ կ'ողջունէ ՀՀ իշխանութիւնները:

Մար. ք էջ 4

33-ԱՄԵԱՅ ՎԱՅԷ ԱԲԵՏԵԱՆԻ ՍԱՐՈՒԸՆԷ ԵՏՔ ՅԱՌԱԶԱՑԱԾ ԸՆԴՎՁՈՒՄԸ ՍՏԻՊԵՑ ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻՆ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԵՆ

Յունիս 17-ին Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր եւ Ֆուլթոնի Ֆետերասիոնի նախագահ Ռուբեն Հայրապետեանի ընտանիքին պատկանող «Հարմաքար» ճաշարանէն ներս, թիկնապահներու կողմէ դաժան ծեծի ենթարկուած երեք գինուորական բժիշկներէն 33-ամեայ Վահէ Աւետեան, 12 օր գիտակցութեան չզալով մահացաւ Յունիս 29-ին, գլխուղեղի լուրջ վնասուածքներու հետեւանքով:

Աւետեանի դաժան ծեծը եւ մահը Հայ հասարակութեան մօտ յառաջացուց բուռն զայրոյթ ու մարդիկ շարունակական բողոքի տարբեր միջոցառումներով Հայրապետեանէն կը պահանջէին հրաժարիլ խորհրդարանի պատգամաւորի իր մանդատէն եւ Ֆուլթոնի Ֆետերասիոնի նախագահի պաշտօնէն:

Յուլիս 3-ի երեկոյան Ռուբեն Հայրապետեան այցելեց նախագահական նստավայր, ուր հանդիպում ունեցաւ Սերժ Սարգսեանի հետ: Հանդիպումի աւարտին Հայրապետեան լրագրողներուն յայտնեց, որ աւելի ուշ հանդէս պիտի գայ յայտարարութեամբ:

«Ամէն ինչ կտայի, որ այդ չարաբաստիկ երեկոյան ինչի աչտեղ, բռնէի երիտասարդների վրայ բարձրացող բուռն ցինքերը, կանգնեցնէի այս դժբախտութիւնը, որ կեանք իլլեց, ընտանիքներ կործանեց, երեխաներ որբացրեց: Ամէն



Հայրց քանակի սպայ եւ բժիշկ Վահէ Աւետեան

ինչ կը տայի այս ամէնը հետ պտտելու համար: Բայց չեմ կարող: Վահէն արդէն չկայ: Ու ես դրանով պէտք է ապրեմ: Ու պէտք է նայեմ նրա ընտանիքի անդամ-

ների աչքերին: Չգիտեմ ոնց: Ասում են ամէն ինչ օրէնքով պիտի լինի. վստահ եմ օրէնքով կը լինի, 100 մեղաւոր կը լինի 100 պատիժ կը լինի: Բայց հարցը միայն օրէնքը չէ: Հարցը շատ աւելի բարդ է: Ու ես դա շատ լաւ եմ հասկանում: Հիմա շատերն են մեղադրում ինձ, նոյնիսկ բաների համար, որ ինձ հետ կապ չունեն կամ յօրինուած են. երեւի իրաւունք ունեն: Բայց իմ առաջին մեղադրողը հենց ես եմ: Ես պիտի կանխէի նման դժբախտութիւնը ու չեմ կարողացել դա անել: Չպէտք է իմ եւ իմ ընտանիքի հետ առնչութիւն ունեցող միջավայրում նման իրադարձութիւն հնարաւոր լինէր: Ես

Մար. ք էջ 4

ՈՉ ԵՄ Է ԸՆԿԵՐ ԱԲԵՏԻՍ ՏԵՄԻՐՃԵԱՆ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ ազգային-հասարակական գործիչ, երկարամեայ կուսակցական դեկավար ու ՍԴԶԿ Կեդրոնի նախկին ատենապետ՝ ԸՆԿԵՐ ԱԲԵՏԻՍ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Պէյրութի մէջ Ուրբաթ, 29 Յունիս 2012-ին, յետ երկարատեւ հիւանդութեան: Ընկեր Տեմիրճեանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Պէյրութի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ եւ ապա թաղումը տեղի ունեցաւ «Ֆրան Մուպպաֆի» ազգային գերեզմանատան մէջ:

ՍԴԶԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԵՍ Է ԱՏՐՈՒԿԸ ՅԱՆՁՆՈՒՄ ՅԱՂԹԱՆԱԿԸ

ՅԱԿՈՐԲԱՊԱԼԵԱՆ

Այն բանից յետոյ, երբ Ռուբէն Հայրապետեանը յայտարարեց մանդատը վաչր դնելու մասին՝ դրանից առաջ այցելելով նախագահի նստավայր, սկսեց դրսեւորուել Մաշտոցի պուրակի «Ժամանակից» ի յայտ եկած ծանօթ սինդրոմը: Աւելի շուտ, այն ոչ թէ դրսեւորուեց, այլ ակտիւացաւ, որովհետեւ մինչ այդ էլ կար, բայց չուներ «հիմք»: Ռուբէն Հայրապետեանի յայտարարութիւնը եւ դրանից առաջ նախագահի նստավայր այցելելը տուեց այդ հիմքը, եւ սինդրոմը գնաց:

Հանրութեան մի մասը համոզուած է՝ թէեւ երբեմն այդ համոզուածութիւնը նրբանկատօրէն եւ զգուշօրէն փորձ է արուած թաքցնել մտահոգիչ հարցադրումների տակ, որ Հարանաքարի ղեկաւոր յետոյ սկսուած հասարակական բողոքի ալիքը դառնում է կամ ծառայում որպէս Սերժ Սարգսեանի PR, Սարգսեանը խթանեց Ռուբէն Հայրապետեանի դէմ բողոքի ալիքը, իսկ յետոյ էլ դրա վրայ փորձեց կրկին այսպէս ասած բարի թագաւոր երեւալ:

Սինդրոմը բաւական տարածուած է, ու թէեւ դրսեւորուած է բաւական առաջադէմ եւ ազատախոհ մարդկանց կատարմամբ, այդուհանդերձ այն կարծես թէ առաւել բնորոշ է խորքային առումով, հոգեբանական շերտերի մակարդակում գերիշխող տրակական մտածողութեամբ հասարակութիւններին: Այդ հանրայինները որեւէ կերպ չեն ուզում հաւատալ, թէ ունակ են ինչ որ բան պարտադրել իշխանութեանը, խաղի ինչ որ կանոն,

ինչ որ որոշում՝ թէկուզ միջանկեալ, թէկուզ կիսատ:

«Ոնց կարող է պատահել, որ տէրը յանկարծ գիշի ստրուկի որեւէ պահանջի: Ձի կարող լինել այդպիսի բան: Տէրը ինքն է ամէն ինչ շատ խորամանկօրէն, հեռատեսօրէն պլանաւորում, կազմակերպում, ուղղորդում եւ իրականացնում, PR-ի շրջանակում»:

Հենց այդ մտածողութեան վրայ են յառնում տէրերը, մնում տէրերը, յարատեւում տէրերը, իրար փոխարինում տէրերը, իսկ քաղաքացին ոչ մի բանի տէր չի դառնում, որովհետեւ հենց նկատուած է տիրանալու փոքր իսկ նշոյլ, անմիջապէս արթնանում է ստրուկն ու իր ձեռքով յանձնում յաջողութիւնը կամ յաղթանակը տիրոջը՝ տուեալ ղեկաւորը իշխանութեանը:

Ունէ մէկը չի մտածում, որ եթէ անգամ ամէն ինչ կազմակերպում եւ անում է իշխանութիւնը, հարկաւոր է այդ ամէն ինչը շուտ տալ իշխանութեան դէմ ու յայտարարել, որ դա ոչ թէ իշխանութիւնն է անում, այլ հասարակութիւնը ստիպում է իշխանութեանը, հասարակութիւնն իր ակտիւութեամբ պարտադրում է իշխանութեանը:

Ունէ մէկի համար երեւի թէ կասկած չկայ, որ Սերժ Սարգսեանը դա արեց առաւելապէս ոչ թէ համոզմունքից ու արժէքներից, այլ իրավիճակից ելնելով, որովհետեւ օրինակ գրեթէ նոյն պայմաններում՝ չորս տարի առաջ, նա նոյն բանը չարեց մէկ այլ օլիգարխի՝ Ալրաղացի Լյովի հանդէպ: Որովհետեւ այն ժամանակ չկար հանրային դժգոհութեան այն ալիքը, որ եղաւ հիմա:

Սերժ Սարգսեանը ներկայումս ստիպուած արեց գոնէ ինչ որ բան, տեսնելով, որ չանելը վնասելու է անձամբ իրեն, անձամբ իր իշխանութեանը: Եթէ հանրային բողոքի շնորհիւ չձեւաւորուէր այդ իրավիճակը, Սերժ Սարգսեանը հազար տարի անց էլ Ռուբէն Հայրապետեանին հրաժարական չէր պարտադրի:

Հետեւաբար, կայ մի եզակի դէպք, թէկուզ փոքր սահմանով, թէկուզ ոչ հիմնաքարային, բայց տեսանելի, երբ իշխանութեան կառուցման կամ պահպանման տրամաբանութեան հիմքում հասարակութեան, ոչ թէ օլիգարխիայի պահանջն ու կարծիքն է:

Ու թուում է, որ հասարակութեան յաջողութիւնը ակնյայտ է: Ու դա հասարակութեան, ոչ թէ Սերժ Սարգսեանի յաջողութիւնն է: Սերժ Սարգսեանն ընդամէնը ստիպուած էր գնալ այդ քայլին: Հետեւաբար հանրութեան հետագայ գործողութիւնները պէտք է կառուցել այդ տրամաբանութեան վրայ, ինչից բխում է՝ յատկապէս մի քանի նախադէպեր ունենալով, որ պէտք է շարունակել ճնշումը իշխող համակարգի վրայ, որովհետեւ ինդիքը ամենեւին էլ Ռուբէն Հայրապետեանի մանդատը չէ, այլ ընդհանրապէս երեւոյթը որպէս իշխող համակարգ:

Հասարակութիւնը պէտք է տեսնի, որ երբ պահանջ է ներկայացնում՝ յատկա, կոնկրետ, համակարգը ստիպուած է լինում առնուազն մէկ քայլ նահանջել:

Միեւնոյն ժամանակ պարզ է, որ ինդիքը այդ մէկ քայլը չէ, այլ համակարգի գոյութիւնն ընդհանրապէս, որը պէտք է չէզոքացուի: Առաւել եւս, որ հանրութիւնը տեսել է նաեւ հակառակը՝ երբ ճնշումը թուլանում է, համակարգը փորձում է հետ բերել իր մէկ

քայլը եւ մի բան էլ աւելի, ինչպէս ցոյց տուեց Գագիկ Բեգլարեանի օրինակը:

Հետեւաբար, հասարակութիւնը պէտք է ոչ թէ գոհանայ ձեռք բերածով, այլ հակառակը՝ շարունակել յատակ ճնշումը համակարգի վրայ: Իհարկէ, այդ գործում անհրաժեշտ է գերծ մնալ աւելորդ էմոցիաներից եւ էյֆորիայից, մնալ քաղաքացիական առանցքի շուրջ, չենթարկուել կուսակցական եւ քաղաքական հոսանքներին, այլ այդ հոսանքները ենթարկել քաղաքացիական պահանջին, ինչպէս օրինակ եղաւ հենց կոնկրետ դէպքում, երբ քաղաքական բոլոր ուժերը դրա մէջ ներգրաւուեցին քաղաքացիական սկզբունքով:

Հասարակութիւնը պէտք է չնահանջի եւ պէտք է շարունակի քայլ առ քայլ առաջ մղել կոնկրետ պահանջները, պահել պահանջատիրութեան մթնոլորտը, գնեցունել այն, ընդլայնել, խորացնել: Թող համակարգի յաջորդ նահանջը չլինի վաղը՝ լինի մէկ ամիս յետոյ, կամ մէկ տարի յետոյ, սակայն հանրութիւնը պէտք է տեսնի՝ եւ տեսնում է, որ պահանջի ղեկաւորն այդ քայլը յայտարարում է քայլ չի ուշանում:

Ու պէտք է հանրութեան «աչքերը բացելու» անուան տակ փակել տեսադաշտը Սերժ Սարգսեանի PR յաղթանակների մասին ստրկաբուխ իմաստութիւններով: Սերժ Սարգսեանն իրավիճակին տիրապետում է, երբ հասարակութիւնն ինքը իրավիճակի բանալին կամովին յանձնում է նրա ձեռքը, ամէն ինչ վերագրելով «կազմակերպուած ուղղորդմանը»: Երբ հասարակութիւնը ինքզինքը յայտարարում է իրավիճակի տէր, Սերժ Սարգսեանն ընդամէնը ստիպուած է լինելու կամ հեռանալ օլիգարխների հետեւից, կամ գնալ բացառապէս հասարակութեան թելադրած իրավիճակի հետքերով:
«ԼՐԱԳԻՐ»

ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՆՆԱԹԻ (ՄԵՂԱԴՐԱՆՔԻ) ԱՌԱՋՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Դատելով ամէն ինչից, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գեկոյցը եւ այն փաստը, որ Եւրամիութիւնը յետաձգել է Հայաստանին ցուցաբերուելիք օգնութեան տրամադրումը, կարգին բարկացրել է իշխանութիւններին: Սրանք այնպէս են իրար խառնուել, որ արդէն իրարամերժ յայտարարութիւններ են անում: Փոխարտգործնախարար Զոհրապ Մնացականեանը յայտարարում է, թէ այդ գեկոյցն ու զոնորների համաժողովի յետաձգումն իրար հետ ընդհանրապէս կապ չունեն, իսկ հանրապետական պատգամաւոր Արտակ Դաւթեանը, հակառակը, գտնում է, որ նման գեկոյցները «հենց այնպէս չեն արուած» եւ այդ կառուցներին օգնում են «որոշումներից հետ կանգնել», «ինչ-ինչ հարցերում մեզ աւելի գիշորամիտ դարձնել» եւ այլն:

Լաւ, Զոհրապ Մնացականեանը դիւանագէտ է, նրան հանգիստ թողնենք եւ անդրադառնանք Արտակ Դաւթեանի ասածներին, որովհետեւ հենց նա է ներկայացնում այս իշխանութիւնների իրական դիրքորոշումները: Նրա ասածները բաժանում են երկու մասի: Առաջին՝ մոռնալով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հասցէին (որովհետեւ նրանք մեր նկատմամբ անարդար են), եւ երկրորդ՝ մոռնալով մեր «վայհ-հայրենասէրների» հասցէին (որովհետեւ նրանք «Չուր են լցնում այդ ջրաղացին»):

Սկսենք առաջինից: Հանրա-

պետական պատգամաւորը գտնում է, որ «Հայաստանն անցկացրել է օրինակելի ընտրութիւններ եւ իրականում կարող է օրինակ ծառայել նոյն ԵԱՀԿ 56 երկրների համար», իսկ նրանք առանց կոնկրետ փաստեր նշելու ընդհանուր դատողութիւններ են անում՝ թէ իբր մթնոլորտն այն չէր, վատահոլութեան մակարդակն այն չէր եւ այլն: Արտակ Դաւթեանը ճիշդ է ասում, գեկոյցում կոնկրետ փաստեր գրեթէ չկան: Բայց եկէք մի պահ մեզ պատկերացնենք մի պահ պային դիրտողների դերում: Նրանք գալիս են անձանօթ մի երկիր, հետեւում ընտրութիւնների ընթացքին ու զարմանքով արձանագրում, որ իշխող քաղաքական ուժը, որի օրօք տնտեսութիւնը 14 տոկոս անկում է արձանագրել եւ որի օրօք աղքատների թիւն աճել է 40 տոկոսով, ընտրութիւններում բացարձակ յաղթանակ է տանում: Ի՞նչ պիտի մտածեն այդ մարդիկ. կամ այդ ժողովուրդը մագոխիստ է, կամ ընտրութիւնները շատ հնարամիտ ձեւով կեղծուել են: Դիտորդները ծանօթանում են պաշտօնական վիճակագրութեանը եւ պարզում, որ այդ երկրի բնակչութիւնը նախորդ ընտրութիւններից յետոյ 200 հազարով նուազել է, իսկ ընտրողների թիւը 200 հազարով աւելացել է: Ի՞նչ պիտի մտածեն այդ մարդիկ. պիտի մտածեն, որ կամ տուեալ երկրում թուաբանութեան բոլորովին այլ օրէնքներ

են գործում, կամ ընտրութիւնները կեղծուել են: Հիմա Արտակ Դաւթեանն այդ դիտորդների վրայ մոռնալով է գալիս, թէ ինչո՞ւ էք սխալ եզրակացութեան հանգել, եթէ կեղծիքների վերաբերեալ կոնկրետ փաստեր չունէիք՝ պարտաւոր էիք եզրակացնել, որ մեր ժողովուրդը մագոխիստ է:

Հիմա անդրադառնանք Հայաստանի դէմ դաւեր նիւթող միջազգային մոլթ ուժերի ջրաղացին ջուր լցնողներին: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ իշխանութիւնների մոռնալով տեղին է: Իբր՝ դէ հիմա ինչ եղել էր էլ է, սուս մնացէք, թող էդ մէկուկէս միլիարդը բերենք, առանց էն էլ հայներս հալ չի, ոնց էլ լինի՝ դրանից մի երկու կոպեկ էլ երկրի համար կը ծախսենք: Հիմա պատկերացնենք, որ ընդդիմութիւնը հենց այդպէս էլ վարում է, ձայն-ծպտուն չի հանում, Եւրամիութիւնն էլ հաւատում է, որ ամէն ինչ կարգին է եւ տալիս է այդ գումարը: Ի՞նչ է տեղի ունենում դրանից յետոյ: Այդ յաջողութիւնից ոգեւորուած՝ իշխանութիւնները յաջորդ ընտրութիւններն աւելի այլանդակ ձեւով են կեղծում, յաջորդ կառավարութիւնը լինում է ոչ թէ կիսակրիմինալ, այլ ամբողջովին կրիմինալ, մենաշնորհներն աւելի են ամրապնդուած, եւ որպէս արդիւնք՝

Շաբ.ը էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՅԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԳԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ Կ'ԱՌԱՋԱԴՐՈՒԻ, ԵԹԷ «ԱՇՆԱԸՆ ԵՊԱՏԱԲՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԼԻՆԵՆ»

Եթէ աշնանը լինեն նպաստաւոր պայմաններ, ապա Լեւոն Տէր-Պետրոսեանը 2013-ի նախագահական ընտրութիւններում կը լինի Հայ ազգային կոնգրէսի առաջնային թեկնածուն, եւ չի բացառուում, որ ՀԱԿ-ից բացի Տէր-Պետրոսեանին սատարեն նաեւ այլ քաղաքական ուժեր: Այս մասին յայտարարեց ՀԱԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի այն հարցին, թէ արդեօ՞ք Տէր-Պետրոսեանը Փետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններին մասնակցելու ցանկութիւն ունի:

«Շատ բնական է, որ եթէ աշնանը դրա համար լինեն նպաստաւոր պայմաններ, ինքը ամենաառաջնային թեկնածուն է Հայ ազգային կոնգրէսի առաջադրման համար, չեմ բացառում նաեւ, որ այլ ուժեր նոյնպէս սատարեն իրեն», - ասաց Զուրաբեանը:

Զուրաբեանն ասաց՝ Տէր-Պետրոսեանի առաջադրման համար նպաստաւոր պայմանները ներքին եւ արտաքին քաղաքական գործօններ են:

«Դա ստեղծուած քաղաքական իրավիճակն է, դասաւորութիւնն է պառլամենտում, փողոցում, քաղաքական համաձայնութիւններ են, միջազգային իրավիճակը, Հայաստանի տնտեսական վիճակը, սոցիալական դժգոհութեան չափը: Այնքան գործօններ կան, որ պէտք է վերլուծուեն: Տէր-Պետրոսեանը 2007 թուականին առաջադրուելու նպատակով մի ամբողջ հետազոտութիւն է արել, վերլուծել է բոլոր այս գործօնները, այցելել է Հայաստանի բոլոր շրջանները, մանրամասն հետազոտել է ստեղծուած իրավիճակը եւ նոր որոշում է ընդունել: Հենց դա է պատճառը, որ մենք այսօր որեւէ յայտարարութիւն չենք անում այդ կապակցութեամբ», - ասաց Զուրաբեանը:

Հարցին, թէ հնարաւոր համարում է, որ Փետրուարին կայանալիք ընտրութիւններում Տէր-Պետրոսեանին սատարի նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակ-

ցութիւնը, ում հետ ՀԱԿ-ը համագործակցեց խորհրդարանական ընտրութիւններից առաջ, Զուրաբեանը պատասխանեց. - «Ես հնարաւոր եմ համարում, որ բոլոր ուժերը, որոնք ընդդիմանում են Սերժ Սարգսեանի բռնապետութեան դէմ, կարող են համախմբուել միասնական թեկնածուի շուրջ, եւ շատ հաւանական եմ համարում, որ այդ միասնական թեկնածուն կը լինի Լեւոն Տէր-Պետրոսեանը»:

Թէեւ Զուրաբեանը բազմիցս ընդգծեց, որ նախագահական ընտրութիւններում իրենց թեկնածուի առաջադրման հետ կապուած ՀԱԿ-ը դեռեւս որոշում չի կայացրել, բայց ընդգծեց, որ 2013-ին նախագահական ընտրութիւններում «այս ուժերին յաղթելու համար պէտք է կենտրոնանալ այնպիսի թեկնածութեան վրայ, որն ունի ընդդիմադիր ուժերին համախմբելու ամենամեծ պոտենցիալը»: Այդ թեկնածուն, ըստ Զուրաբեանի, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն է:

«Ես այլ հաւասար ֆիզուր չեմ տեսնում, որը կարող է կոնսուլիդացնել ամբողջ ընդդիմադիր դաշտը: Բայց դա չի նշանակում, որ մենք այսօր պէտք է որոշումներ ընդունենք, դա անլուրջ կը լինի: Այն ուժերը, որ այսօր որոշում են ընդունել, անլուրջ են: Առաւել եւս, որ ոչ ոք չի կարող կանխատեսել, թէ ինչ է լինելու աշնանը, հիմա նման յայտարարութիւններ են անում, իրենք ցոյց են տալիս իրենց անլուրջութիւնը», - ասաց նա:

Մի քանի տարի առաջ հանրահաւաքներից մէկում Լեւոն Տէր-Պետրոսեանն ասել էր, թէ կ'առաջադրի իր թեկնածութիւնը միայն այն դէպքում, երբ առաջադրուի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարեանը: Լրագրողները հարցրեցին, թէ արդեօ՞ք ՀԱԿ-ում արդէն մոռացել են այդ յայտարարութիւնը: Զուրաբեանը հակադարձեց, որ այդ յայտարարութիւնը արուել է քաղաքական կոնկրետ իրավիճակում, որն այլեւս գոյութիւն չունի:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՇԽԱՆԱԲՈՐԻ ՓՈԽԱՐԷՆ, ՎԱԽԵՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻՆ»

Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեանն Յուլիս 2-ին հրաւիրուած ասուլիսը խնդրեց սկսել մէկ րոպէ լուրթեամբ՝ ի յիշատակ «Հարմաքար» ռեստորանում տեղի ունեցած ծեծկոտուքի արդիւնքում մահացած, բուժժառայութեան մայրը Վահէ Աւետեանի յիշատակի:

Այնուհետեւ նա պարզաբանեց, որ մինչ օրս դէպքի առիթով խուսափել է յայտարարութիւնից, քանի որ ինքն ի պաշտօնէ որեւէ իրաւասութիւն չի ունեցել միջամտելու:

«Նախանձում եմ այն ուժերին, որոնք կարող են արտայայտել իրենց մարդկային կարծիքները, ժամերով խօսել, թէ որքան են վրդովուած: Զրկուած եմ նոյնիսկ իրաւունքից գնալ եւ մոմ վառել», - ասաց նա, սակայն չիտուսափեց խօսել, թէ ինչի հետեւանքով է, որ նման երեւոյթների ականատեսն ենք լինում:

«Այս ամէնը վախերի արդիւնք եւ հետեւանք է, մեր հասարակութեան ամենամեծ ցաւը տարբեր վախերն են: Վախ, որ դու կը յայտնուէս դատարանում, եւ քո հանդէպ կը լինի անարդար վճիռ: Վախ, որ ոստիկանը քեզ կը ծեծի, վախ, որ պետատոտեսուչը պարտի ձեռքով կը խոչընդոտի քո երթեւեկութեանը: Վախ, որ դու քո վերջին թոշակը չես ստանալ, կամ այն չի հերիքի եւ այլն», - ասաց նա:


Կարէն Անդրէասեանը նաեւ նշեց, որ իւրաքանչիւր քաղաքակիրթ հասարակութիւնում նման վախեր գոյութիւն ունեն, բայց հակառակ պատկերով: Ըստ նրա՝ մեզ մօտ վախերի հաւասարակչութիւնը լրջօրէն խախտուած է:

ՏԻՂԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է»

«Գաղտնիք չէ, որ այսօր մեր պետութեան առջեւ ծառայած կարեւորագոյն խնդիրներից մէկը կոռուպցիան է», - յայտարարել է վարչապետ Տիգրան Սարգսեանը՝ Յուլիս 2-ին ելույթ ունենալով Հայաստանի դատախազութեան աշխատողի օրուան եւ դատախազութեան 94-ամեակին նուիրուած հանդիսաւոր նիստին:

Վարչապետը վստահեցրել է, որ կոռուպցիայի դէմ պայքարը կառավարութեան առաջնահերթ խնդիրներից մէկն է:

Կառավարութեան անունից շնորհաւորելով դատախազութեան աշխատակիցներին մասնագիտական տոնի առթիւ՝ Տիգրան Սարգսեանը նշել է. - «Դատախազութեան գործունէութիւնը մշտապէս գտնուել է մեր իշխանութեան եւ հասարակու-



Մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեան

«Վախը պէտք է ունենայ իշխանաւորը՝ կաշառք վերցնելու պահին, վախը պէտք է ունենայ մկանոտ այն երիտասարդը, որ ծեծելով կարող է սպանութեան հասցնել մէկ այլ երիտասարդի: Վախը պէտք է ունենան իշխանաւորները, եթէ հասարակութիւնը նման ցնցման եւ դժգոհման մէջ լինի», - ասաց նա:

Կարէն Անդրէասեանի համոզմամբ, այդ վախն անյաղթահարելի է, մինչեւ չլինեն արդար դատախազական բարեփոխումներ, այն յաղթահարել չի լինի:

ՀՀ օմբուդսմենը նկատեց, որ «Հարմաքարի» դէպքից յետոյ այդ ռեստորանի շէնքը պայթեցնելու փոխգնդապետի փորձը հենց այդ վախի վրայ է հիմնուած, որ չի լինի արդարութիւն:

Մարդու իրաւունքների պաշտպանը եւս մէկ անգամ բարձրաձայնեց, որ Հայաստանի համար այսօր երկու կարեւորագոյն հարց է դրուած. «Աղբեղանական խնդիրը երկիրը դրսից է կեղեքում, դատախազական խնդիրը՝ ներսից»:

ՍԱՐԳՍԵԱՆ. «ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԽՆԴԻՐՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ»

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի համոզմամբ, արտաքին ուժերն այսօր միջամտում են Դաշնակցութեան ներքին գործերին, փորձում են խնդիրներ ստեղծել կուսակցութիւնում եւ նպատակ ունեն փոխել Դաշնակցութեան ներկայիս ղեկավարութեանը:

Նման յայտարարութիւն Մարգարեանն արեց «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցի ժամանակ՝ պատասխանելով այն հարցին, թէ որքանո՞վ են ճիշդ լրատուամիջոցներում շրջանառուող ստեղծութիւնները, որ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ Դաշնակցութեան ներսում առաջացել են լուրջ հակասութիւններ:

«Մենք կենդանի օրգանիզմ ենք, եւ ընտրութիւններ են աւարտուել, որտեղ, մեղմ ասած, մենք փայլուն արդիւնք չենք ունեցել: Եւ շատ բնական է, որ կուսակցութեան մէջ լինեն դժգոհութիւններ, մտահոգութիւններ, տարբեր կարծիք-

ներ: Սա բնական է: Եթէ չլիներ, կը նշանակէր, որ մենք առողջ կուսակցութիւն չենք», - ասաց Հրանդ Մարգարեանը, - «Բայց հարցը դրա մասին չէ: Այն, ինչ այսօր մամուլի մէջ փորձում են ներկայացնել, բացարձակ ստի վրայ է հիմնուած»:

Դաշնակցական գործիչը շարունակեց. - «Եւ նպատակ կայ, երբ մենք լաւ արդիւնք չենք ունեցել, պարարտ հող է ստեղծուում արտաքին միջամտութիւնների համար: Մեզ խորհուրդ են տալիս, որ պէտք է ամերիկեան ուժ դառնաք, մեզ խորհուրդ են տալիս, որ պէտք է խորհրդարանական պայքարից հրաժարուէք՝ իբր թէ պիտի միայն յեղափոխական կուսակցութիւն դառնանք: Մեզ խորհուրդ են տալիս, որ Ղարաբաղում ում պաշտպանենք, ում չպաշտպանենք: Այս տեսակ խորհուրդները շատ են: Սրանք միջամտութիւններ են: Փորձում են Դաշնակցութեան մէջ խնդիրներ ստեղծել»:

թեան ուշադրութեան կենտրոնում: Դրա պատճառն այն է, որ շատ յաճախ պետութեան եւ դատախազութեան առջեւ ծառայած խնդիրները նոյնական են, աւելին՝ պետութիւնը հենց դատախազութեան գործունէութեան օգնութեամբ է դիմակայում մի շարք կարեւորագոյն մարտահրաւէրների»:

Կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ, դիմելով դատախազներին՝ վարչապետը նշել է, որ քաղաքացին չպէտք է վախենայ դատախազից, հասարակութիւնն էլ պէտք է վստահ դատախազութեանը՝ համոզուած լինելով, որ դատախազութիւնը պատշաճ ձեւով է իրականացնում իր գործառնոյթները:

ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԿԵԱՆԸ Կ'ԱՌԱՋԱԴՐՈՒԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

«Ազգային ինքնորոշում Միաւորում» (ԱԻՄ) կուսակցութեան ղեկավար Պարոյր Հայրիկեանը 2013 թուականի նախագահական ընտրութիւններին կ'առաջադրի իր թեկնածութիւնը:

Հայրիկեանը այդ մասին յայտարարեց Հայաստանի սահմանադրութեան ընդունման 17-ամեակին ընդառաջ հրաւիրուած մամուլի ասուլիսում՝ պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին:

«Ես առաջադրուելու եմ, ԱԻՄ-ը որեւէ որոշում չի ընդունել, կարծում եմ, որ պարտաւոր եմ», - ասաց նա:

ԼՈՒՐԵՐ

«ՀՐԱՊԱՐԱԿ» . «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ՖԻՆԱՆՍԱԴՈՐԵԼ Է ՔՈՉԱՐԵԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆԱԽԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հրապարակ Թերթն անդրադառնում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությանը՝ մասնավորապես գրեթե «Փոքրերը» հիմնադրամի կազմի մասին, մի քանի անաւարտ ծրագրեր գտանք, որոնց համահայկական, սոցիալական բնույթը, համայն հայութեան համար օգտակարութեան աստիճանը խիստ կասկածելի են:

2005 թուականին հիմնադրամն աւելի քան 245 հազար դոլար է ծախսել նախագահի նստավայրը վերանորոգելու համար: Հիմնադրամի կազմում «նախագահական» բաժնի բացակայում է, այլ գրում է՝ «բնակելի շէնք»: Թերթի աղբիւրների միջոցով պարզուեց, որ խօսքը թիկնապահների համար նախատեսուած տարածքի մասին է: Ստացուած է, որ Քոչարեանի թիկնապահներին շքեղ պայմաններ տրամադրելը համազգային նշանակութեան խնդիր էր, որին պէտք էր հենց համահայկական բարեգործականի լայն խողովակը ծառայեցնել: Յետոյ էլ գարմանում ենք, երբ թիկնապահներն իրենց նորմալ չեն պահում:

Ռոբերտ Քոչարեանի՝ լաւ շէնքում նստելու ամբիջիային ոչ ոք չի կարող պատասխանել: Իսկ թէ ովքեր են համաձայնել ֆինանսաւորել այս նախաձեռնութիւնը եւ ինչ են դրա դիմաց ստացել, կայքում գրուած է:

2007 թուականին Ծաղկաձորի ճոպանուղին է վերանորոգուել, ճոպանուղու աւտոկայանատեղին է կառուցուել: Այս բոլոր աշխատանքների, գումարած ճոպանուղու նախագծման եւ փորձաքննու-

թիւնների, նաեւ տեխնիկական հսկողութեան համար ծախսուել է մօտ 153 հազար դոլար: Ով է «տիրութիւն» անում ճոպանուղուն, ում գրպանն են գնում հիմնադրամի ֆինանսաւորմամբ վերականգնուած այս համահայկական եւ ոչ շատերին հասու գումարձալիքից ստացուած գումարները, թերթը կը ճշդի առաջիկայում:

Նոյն 2007 թուականին երկրորդ նախագահի անուան եւ սպորտային նախասիրութիւնների հետ կապուած մէկ այլ գումարձալիք կառուցուեց: Սեւանայ լճի ափին կահաւորուեց առաջատային ակումբը, այն համալրուեց գոյքով: Նոր հայերի առաջատային «կայքերի» համար «Հայաստան» համահայկականը վճարեց անհամեմատ աւելի, քան նախագահականի եւ ճոպանուղու վերանորոգումը միասին՝ մօտ 1 մլն 92 հազար դոլար: Այն դէպքում, երբ այդ նոյն Գեղարքունիքի մարզի սահմանամերձ գիւղերը դատարկուեցին իսկու ջրի բացակայութեան պատճառով: Օրինակ, Զաղացաձոր համայնքին ջուր հասցնելու համար ընդամենը 30 հազար դոլար է պէտք, եւ մինչ օրս կառավարութիւնը չի կարողանում այդ գումարը յատկացնել: Սահմանային այս գիւղում բնակուող, սահմանը պահող ՀՀ քաղաքացիները վաճառու են իրենց տների քարերը, մեքենան՝ 8 հազար դրամով, Ռուսաստան մեկնող աւտոբուսներին տոմս գնում ու մեկնում երկրից միայն իսկու ջուր չունենալու պատճառով: Մեկնաբանութիւն պէտք է, ուղղակի դնենք թուերն իրար կողքի, եւ դրանք կը խօսեն»:

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻՆ ՊԻՏԻ ՅԱԶՈՐԴԵՐ ՕՐՅԱՆ ՓԱՍՈՒՔԸ

Շարունակուած էջ 1-էն

«Բանտի մէջ մնալու մեզմէ աւելի «արժանի» մարդիկ կան՝ էրհան Թունճեւը եւ զինք ֆինանսաւորած Ռամազան Աբիւրքեքը», - ըսած է Հանալ:

Եսաին Հանալ նշած է, որ Տինքի սպանութեանէն ետք կը նախատեսուէր սպանել նաեւ գրող Օրհան Փամուքը, սակայն աւելի ուշ ետ կանգնած են այդ որոշումէն:

Տինքի սպանութեանէն ետք ձերբակալուած Եսաին Հանալ, դատախազութիւն տեղափոխուելու ճանապարհին սպառնացած էր Օրհան Փամուքին, ըսելով, - «Փամուքը թող խելքը գլուխը հաւաքէ»:

Վերջին հարցազրոյցին ընթացքին, Հանալ անդրադարձած է իր այդ խօսքերուն, նշելով, որ Տինքի գործով ձերբակալուած, ապա արդարացուած եւ ազատ արձակուած էրհան Թունճեւը իրեն ըսած է, որ թուրք ազգի համար մեծ վտանգ կը ներկայացնեն Հրանդ Տինքն ու Օրհան Փամուքը եւ ինքը ատոր համար «հաղորդագրութիւն» յղած էր Փամուքին:

Ան նշած է, որ Փամուքի սպանութեան նախագիծը չեղեալ համարուած է, քանի որ Տինքի սպանութեան շուրջ շատ մեծ աղմուկ

բարձրացած էր: «Փամուքի մասին ըսած այդ խօսքերուս համար շատ կը զղջամ», - ըսած է Հանալ:

Ան պատմած է, օր Փամուքի մասին իրեն առաջին անգամ պատմած է էրհան Թունճեւը:

«Էրհան ինձի ըսած էր, որ Օրհան Փամուք արտասահմանի մէջ ըսած է, թէ թուրքերը 1.5 միլիոն հայ եւ հազարաւոր քիւրտ սպանւած են: Ինձի ըսաւ, որ եթէ Փամուքը նման յայտարարութիւն ըրած չըլլար, անոր Նոպէլեան մրցանակ չէին տար», - պատմած է ցմահ դատապարտեալը: Հանալ դարձեալ յայտարարած է, որ Տինքի սպանութեան ետին կանգնած մարդիկ կը շարունակեն ազատութեան մէջ մնալ:

«Հրանդ Տինքի փաստաբան Ֆեթհիյէ Չեթին դատավճիռի օրը յայտարարեց՝ կը ծաղրեն մեզ: Մեզ իրօք կը ծաղրեն: Օկիւն Սամասթի եւ իմ բանտի մէջ ըլլալը այս երկրի 70 միլիոն բնակչութեան ուղղուած անարգանք է: Բոլորը գիտեն, հասկցած են, որ այդ սպանութեան ետին մենք չէինք: Այդ ամէնը բարդուեցաւ մեր վրայ եւ մեզմէ գատ բոլորը արդարացուեցան: Եթէ էրհան Թունճեւը անմեղ է, ուրեմն ես ալ անմեղ եմ», - ըսած է Հանալ:

«ԵՐԿՐԱՊԱՐԻ» ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻՑ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԻՆԱՄԹԵՐՔ ԵՆ ԳՏԵԼ



Երեւանի մէջ յայտնաբերուած զինամթերքէն մաս մը

Յուլիսի 3-ի առաւօտեան յայտնաբերուած մեծ քանակութեամբ գէնքը եղել է «Երկրապահ» կամաւորականների միութեան կենտրոնի նախկին բաժանմունքի տանիքում:

Ոստիկանութիւնը յայտնաբերել է հակատանկային ականներ, նռնակներ, պայթուցիչներ, ճայթիչներ, քիմիական քողարկիչներ:

Ոստիկանութեան աղբիւրները յայտնեցին, որ դէպքի վայրում

այժմ աշխատում է ոստիկանութեան օպերատիւ-քննչական խումբը, իրաւապահները փորձում են պարզել, թէ ում է պատկանել նման մեծ քանակութեամբ զինամթերքը:

Յուլիսի 3-ին, ժամը 9.30-ի սահմաններում, ոստիկանութեան կենտրոնականի բաժին ահազանգ է ստացուել, որ Պարոնեան 20 հասցէում գտնուող շէնքի տանիքում շինարարական աշխատանքներ կատարողները զինամթերք են գտել:

ՀԵՐՄԱՆ ՎԱՆ ՌՈՍԲՈՅ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

րու բոլոր ջանքերը՝ աւելի մրցակցային եւ թափանցիկ խորհրդարանական ընտրութիւններ իրականացնելու համար:

«Մենք, ինչպէս ըսուած էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական գեկոյցին մէջ, կային որոշ թերութիւններ, բայց մենք յոյսով ենք, որ անոնք պիտի լուծուին նախագահական ընտրութիւններէն առաջ», - ըսաւ ան:

Եւրոպական խորհուրդի նախագահ Հերման վան Ռոմբոյը նաեւ յայտարարեց, որ Հայաստանը Եւրոպական Միութիւն սերտ գործընկերն է եւ իրենք ուրախ են, որ կրնան վերահաստատել իրենց յանձնառութիւնը՝ ի բարօրութիւն Հայաստանի ապագայի:

Եւրոպացի պաշտօնեան անդրադարձաւ նաեւ Լեւնային Ղարաբաղի հարցին յայտնելով, որ տագնապի լուծման յառաջընթացը կը մնայ գլխաւոր առաջնահերթութիւն եւ անհանգստութիւն յայտնեց Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին, նաեւ շփման գիծի վրայ վերջին շրջանին տեղի ունեցած զինուած միջադէպերու կապակցութեամբ՝ ցաւ յայտնելով մարդկային

կորուստներն համար:

Լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ Սերժ Սարգսեանը՝ նշելով, որ Եւրամիութեան եւ Հայաստանի փոխարարութիւններուն մէջ նկատելի է յառաջընթաց: Սարգսեան իր ելույթին մէջ անդրադարձաւ նաեւ Մայիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն, խոստանալով նոր յառաջընթաց արձանագրել 2013-ի ֆետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններուն:

«Անդրադարձ կատարեցինք Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրութիւններին, որոնց արդիւնքների վերաբերեալ Եւրամիութեան մեր գործընկերների եւ մեր գնահատականները համընկնում են. սրանք լաւագոյն ընտրութիւններն էին նորանկախ Հայաստանի պատմութեան մէջ, բայց դեռեւս շատ անելիքներ կան ընտրական գործընթացի հետագայ բարելաւման ուղղութեամբ: Ես վերահաստատեցի մեր պատրաստակամութիւնը նոր առաջընթաց գրանցելու 2013 թուականի նախագահական ընտրութիւնների կազմակերպման եւ անցկացման հարցում», - յայտարարեց Սերժ Սարգսեան:

ՎԱՅԷ ԱԻԵՏԵԱՆԻ ՄԱՅՈՒՆԵ ԵՏՔ

Շարունակուած էջ 1-էն

ինձ չեմ ներում, ու չգիտեմ ոնց պիտի ներում հայցեմ: Այս պահին ես յայտարարում եմ, որ բարոյական պարտաւորութիւն եմ գգում եւ վալը եմ դնում Ազգային ժողովի պատգամաւորի իմ մանդատը: Ես ներողութիւն եմ խնդրում իմ բոլոր ընտրողներից, որ չեմ կարողանայ արդարացնել իրենց սպասելիքները, բայց վստահ եմ, որ ուղղակի պարտաւոր եմ այս քայլն անելու: Ուզում եմ հաւատալ, որ աւանցիկներն ինձ ճիշդ կը հասկա-

նան: Յոյս ունեմ, որ մի օր էլ կը կարողանամ ներում ստանալ վահէնց ընտանիքում. յամենայն դէպս ամէն ինչ կ'անեմ դրա համար: Սգում եմ բոլոր հարազատների հետ միասին», - ըսուած էր Հայրապետեանի յայտարարութեան մէջ:

Իշխող Հանրապետական կուսակցութեան անդամի այս քայլը, վերջին տարիներուն Հայաստանի մէջ առաջին դէպքն է, երբ օլիգարխիկ համակարգի մէկ ներկայացուցիչը, հրապարակաւ ներողութիւն կը խնդրէ իր արարքին համար ու հրաժարական կը ներկայացնէ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՅՈՐԴԱՆԱՆԻ ԹԱԳԱԲՈՐԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՄԱՍԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ամման. Յորդանանի Ապտալլա թագաւորը հանդիպում մը ունեցաւ Պաղեստինի Համաս կազմակերպութեան ղեկավարութեան հետ: Սոյն հանդիպման նպատակն էր լուսարձակի տակ առնել Եգիպտոսի նախագահական ընտրութիւններէն ետք իսլամական նոյն հոսանքի ծաւալման հարցը: Արդարեւ, Միջին Արեւելքէն ներս, ներկայիս սկսած է նոր ծաւալ ստանալ «Իսլամ եղբայրներու» շարժումը, որուն ծայրայեղ գաղափարները սկսած են մտահոգութիւն ստեղծել արաբական եւ միջազգային քաղաքական շրջանակներու մօտ:

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՄԵՐԺԵ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրիոյ քաղաքական տագնապին համար արտաքին միջամտութիւնները մերժումի ենթարկուեցան: Միւս կողմէ առաջարկուեցաւ համախոհական նոր դահլիճ մը կազմել, որուն մէջ ներգրաւուած ըլլան երկրի ընդդիմադիրները: Այս հարցի կապակցութեամբ Ռուսաստան համամիտ գտնուեցաւ տեսակցիլ ընդդիմադիր հոսանքներու ներկայացուցիչներուն հետ: Սակայն ընդդիմադիրները կը մերժեն մաս կազմել ազգային միասնութեան դահլիճին:

Կ'իմանանք թէ ցարդ 35,000 սուրիացի գաղթականներ Թուրքիա ապաստանած են եւ կը բնակին սահմանամերձ շրջաններու մէջ: Միւս կողմէ շուրջ 1300 սուրիահայեր Հայաստանի հպատակութեան դիմումներ ներկայացուցած են:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆ

Սուրիական ուժեր Լիբանանեան սահմանն անցնելով գրաւեցին մաքսատունը, անարգանքներ ուղղեցին լիբանանեան ապահովութեան ուժերուն դէմ եւ 2 պատանդներ առնելով մեկնեցան Սուրիա: Ապա անոնք աւելի ուշ ազատ արձակուեցան: Նախագահ Միշէն Սլէյման անընդունելի նկատեց սուրիական ուժերուն լիբանանեան հողեր ներխուժումը Ռուստի Խալիլի շրջանին մէջ: Նախագահ Սլէյման դատապարտեց եղած ներթափանցումը եւ յոյս չայտնեց որ հետաքննութիւններ կը կատարուին եւ խախտումին պատասխանատուները կը ճշգրտուին:

ՍԵՆՏՍԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ Կ'ԱՐԳԻԼԵ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼԵԼ

Սէնտսական Արաքիոյ լրատու գործակալութեան համաձայն Սէնտսական Արաքիան իր հպատակներուն ազդարարած է չայցելել Լիբանան: Սէնտսական արտաքին գործոց նախարարութեան բնաբերն ըսած է թէ այս միջոցառումն առնուած է ապահովելու համար սէնտսիներու անվտանգութիւնը, մասնաւորաբար այս անկայուն ժամանակաշրջանին:

Արդարեւ, անցեալ Մալիս ամսուան ընթացքին նոյն պատճառներով նման որոշումներ առած էին նաեւ Արաբական Էմիրէթները, Քաթարն ու Քուեյթը, նկատի առնելով մասնաւորաբար դրացի Սուրիոյ եւ Թրիփոլի քաղաքի իրադարձութիւնները:

Նշենք նաեւ որ քանի մը օր առաջ Լիբանանի Պէքասի շրջանէն հրթիռ մը արձակուած էր Սուրիոյ ուղղութեամբ:

ՆՈՐ ԵՐԵՍՓՈՒՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԻՊՈՅ ՄԵՋ

Այս օրերուն Լիպիա կը նախապատրաստուի կայացնել առաջին երեսփոխանական ընտրութիւնները նոր վարչակարգի օրով: Միւս կողմէ Լա Հէյի միջազգային ատենանը մօտ ատենէն պիտի սկսի դատել նախկին բռնակալ Մուամմար Քադաֆիի որդին Սէյֆ Ուլ Իսլամը: Արդարեւ, ան կ'ամբաստանուի ապստամբներուն դէմ ջարդ կազմակերպելով եւ այլ ոճրագործութիւններով:

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՅՈՅՅԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

Անցնող շաբաթավերջին հսկայական զօրակցական ցոյցեր տեղի ունեցան Գահիրէի, Աղեքսանդրիոյ եւ այլ քաղաքներուն մէջ: Իսլամ եղբայրներու կողմէ կազմակերպուած այս ցոյցերուն նպատակն էր զօրակցութիւն ցուցադրելով հանդերձ՝ փութացնել նոր սահմանադրութեան պատրաստութիւնն ու խորհրդարանական ընտրութիւնները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՔԱՐԻՒՂԻ ԳԻՆԸ Կ'ԱԺԱՆՆԱՅ

Միջազգային տնտեսական այժմու տագնապին աւրնթեր ֆինանսական ճգնաժամը կարծէք չէ ազդած քարիւղի սակերուն վրայ: Քանի մը ամիս առաջ տակաւին հարիւր տոլարէն աւելիով վաճառուող քարիւղը հետզհետէ գիներու անկում սկսաւ արձանագրել: Ներկայիս մէկ տակառ քարիւղը կ'արժէ մօտաւորապէս 80 տոլար: Տնտեսագէտներու կարծիքով վառելանիւթի գիներու անկումը պիտի շարունակուի յառաջիկայ շաբաթներուն եւ ամիսներուն եւս...: Շատ հաւանաբար տակառ մը քարիւղին գինը հասնի 70 տոլարի:

Ուրեմն աչքը լոյս վարորդներուն:

ՄՊԱՆԻԱ ԵՒ ԿԻՊՐՈՍ ՏԱԳՆԱՊԻ ՄԵՋ

Եւրոպական Միութեան անդամ կարգ մը երկիրներու տնտեսական տագնապը կը շարունակուի: Յունաստանէն ետք տնտեսական սուր տագնապ մը կը բոլորեն Կիպրոսն ու Սպանիան: Արդարեւ, Եւրոպայի անգործութիւնը մեծ համեմատութիւններու հասած է Սպանիոյ մէջ: Այստեղ մրցանիշ կտրող անգործներու թիւը հասած է հարիւրէն քսանի:

Նշենք նաեւ որ տնտեսական անակնկալ նոր տագնապ մը պարագային ԱՄՆ-ի բնակիչները մեծ ցնցում մը կրնան ապրիլ: Քանի որ պատրաստի հնչիւն դրամը կրնայ բաւարարել միայն վեց ամիս:

ՅՈՒԲՈՒՇԻՄԱՅԻ ՄԵՋ ՁՈՒԿԻ ՏԱԳՆԱՊԸ ՓԱՐԱՏԱԾ

Ճափոնի Ֆուքուշիմա քաղաքի աթոմակայանի հիւլէական ճառագայթներու տարածման պատճառով առողջապահական խիստ միջոցներ պարտադրուած էին երկրէն ներս: Ներկայիս, առաջին անգամ ըլլալով Ֆուքուշիմայի ջուրերը վնասագերծուած նկատելով, արտօնուած է ձկնեղէններու վաճառքը: Այսուհանդերձ շրջանի բնակչութիւնը վերապահութեամբ կը մօտենայ այս հարցին եւ տակաւին անոր հակազդեցութիւնը յայտնի չէ...:

ԱԲՍՏՐԱԼԻՈՅ ԴՐԱՍԱՏՈՒՆԵՐԸ ԱՄԵՆԱՇԱՐԱԲԵՐՆԵՐՆ ԵՆ

Երկրորդ տարին ըլլալով տնտեսագէտներուն կարծիքով, աշխարհի ամենահաստեղծութեան դրամատուները Աւստրալիական պանքերն են: Միջազգային Կեդրոնական Դրամատան հաղորդագրութեան համաձայն՝ աւստրալիական չորս դրամատուներն են որ կը ղեկավարեն զարգացող երկիրներու դրամատուները: Գնատան կը գրաւէ երկրորդ տեղը, իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ երրորդ:

ՏՈԼԱՐԸ ՍԿՍԱԻ ՆԱՅԱՆՁԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Երեւանի սակարանին մէջ Յունիսի աւարտին ամերիկեան տոլարի միջին փոխարժէքը կազմած է 417.96 դրամ: Նախորդ առեւտրային շրջանի համեմատ (Յունիս 22) տոլարն աժանցած է 0.29 առ հարիւր տոկոսով, կամ 1.22 կէտով: Արդարեւ Հայաստանեան փորձագէտներու մեծ մասը տոլարի արժէքի թուլացումը կը նախատեսեն նաեւ Յուլիս-Օգոստոս ամիսներուն: Այս բոլորը սերտօրէն կապուած է գիւղական մթերքներու սեզոնին եւ զբօսաշրջիկներու թիւի յաւելումին հետ:

Իր հերթին եւրօն թուլացում արձանագրած է տոլարի նկատմամբ:

ԵՐԱՇՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ

Հայաստանի սահմանամերձ Տավուշի շրջանի 62 համայնքներէն 41ը ենթարկուած է թէ երաշտի եւ թէ ատրպէյճանական կողմէ յառաջացած թշնամական սպառնալիքներու: Սահմանամերձ շրջանի չէզոք գօտին եւս անգործնական դարձած է երկրագործութեան համար: Այս կապակցութեամբ շրջանի բնակիչները իրենց բողոքն ու պահանջները ներկայացուցած են Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան:

massispost.com
daily news updates

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd, Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave, Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

NEW YORK LIFE **Anthem** **BlueShield** **Aetna** **Health Net** **CIGNA** **KAISER PERMANENTE**

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Ե ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱՆԻ ԴԵՄ, ԹԵ՞ ԻՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Թարգմ.՝ ԶՈՅԱ ՄԵԼԻՔԵԱՆ

Ինչո՞ւ է կասպից ծով տեղափոխում ռուսական նորագոյն հրթիռակիր նաւը:

Թարգմանաբար ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում Վիկտոր Սավենկովի հարցազրոյցը փորձագէտների հետ ռուս-իրանական յարաբերութիւնների վերաբերեալ, որը տեղակայուած էր svpressa.ru կայքում:

Յուժնիսի սկզբին Ռուսաստանի կասպեան նաւատորմը համալրուեց նորագոյն, հզորագոյն «Դադստան» հրթիռակիր նաւով:

Այն Ռուսաստանի ՌԾՈւ-ի առաջին նաւն է, որը սպառազինուած է նորագոյն ունիվերսալ «Կալիբր-ՆԿ» հրթիռային համակարգով, որը կարող է ճշգրիտ հրթիռներով հարուած հասցնել ծովային եւ ցամաքային թիրախներին: Ութ հրթիռից բաղկացած համակարգի հասանելիութեան տեղեկատուական հեռաւորութիւնը կազմում է մինչեւ 300 կմ: Ըստ որոշ ԶԼՄ-ների, այն ընդունակ է խոցել ցամաքային նշանակէտերը մինչեւ 2600 կմ հեռաւորութեան վրայ: Բայց հարց է ծագում, թէ ինչո՞ւ է որոշուել հենց այս տարածաշրջան ուղարկել Ռուսաստանում նման հզոր զէնքի դեռեւս միակ կրիչը: Ո՞ւմ դիմակայելու համար: Ինչպէս յայտնի է, կասպից ծովը ամենամեծ լիճն է, որտեղից չկայ ելք դէպի ովկիանոս: Եւ նման նաւը սահմանափակ տարածքում արգելափակելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ պատճառներ: Կասպեան տարածաշրջանում մեր (Ռուսաստանի - Մ.Զ.) հարեւաններն են Ղազախստանը, Թուրքմենիան, Ատրպէյճանն ու Իրանը: Այդ երկրներից իւրաքանչիւրի հետ մենք ունենք կամ բարեկամական, կամ կայուն գործնական յարաբերութիւններ: Այդ ծովում թուրքիւմ երկրներից ոչ մէկը հզոր նաւեր չունի: Բայց կայ չլուծուած տարածքային վէճ կասպիցի վրայ՝ Իրանի հետ պետական սահմանի վերաբերեալ: Ընդ որում, եթէ դեռ 2003 թուականին Ռուսաստանի, Ղազախստանի եւ

Ատրպէյճանի միջեւ պայմանաւորուածութիւններ էին ձեռք բերուել ծովի յատակի յարակից հատուածների սահմանազատման մասին, ապա Իրանը հրաժարուած է փոխել իր դիրքորոշումը: Եւ դա զարմանալի է, քանի որ նաւթի ապացուցուած պաշարները շէլֆում կազմում են մօտ 10 մլրդ տոննա, նաւթի եւ գազային կոնդենսատի ընդհանուր պաշարները՝ 18-20 մլրդ տոննա: Իրանը ձգտում է ձեռք բերել այդ հարստութեան մեծ մասը վերահսկելու իրաւունքը: Պաշտօնական մակարդակով Իրան-Ռուսաստան յարաբերութիւններն աւելի լաւ են թւում, քան այլ զարգացած երկրների հետ: Սակայն Մոսկուան զգուշաւոր է մերձաւորաբեւեւեան հարեւանի հետ համագործակցութեան մէջ: Օրինակ, Ռուսաստանը հրաժարուեց Իրանին տրամադրել արդէն կնքած պայմանագրով C-300 ՀՊՊ համակարգեր: Բայց եւ այնպէս, իրանական կողմը մշտապէս ցուցաբերում է իր բարի դրացիական վերաբերմունքը, եւ տարբեր ոլորտներում լուրջ մերձեցման ցանկութիւն է արտայայտում:

ԾԶԿ-ի (Շանհայի համագործակցութեան կազմակերպութիւն) վերջին գազաթափոցում Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադն ասել էր, որ պատրաստուած է Մոսկուա մեկնել եւ «շատ է շահագրգռուած այդ այցով», համոզմունք յայտնելով, որ հնարաւոր է առաջընթաց արձանագրել երկու երկրների յարաբերութիւններում: «Մենք ունենք լաւ փորձ եւ երկու երկրների համագործակցութեան պատմութիւն: Մենք բարեկամ հարեւաններ ենք, պիտի համագործակցենք եւ ընդլայնենք այդ համագործակցութիւնը: Մեզանից այդ են պահանջում պատմութիւնն ու ապագան», - նշել է նա:

Իրանի մտադրութիւններն ակնյայտ են, սակայն Ռուսաստանի քաղաքականութիւնը երկիմաստ է թւում: Անցած տարուայ «Կովկաս-2011» գորավարժութիւններից յետոյ որոշ փորձագէտներ պնդում էին, որ, ելնելով հակամարտող

ուժերի կազմից եւ գործողութիւնների բնոյթից, հասկանալի էր, որ սովորուած ենք պատերազմել հենց Իրանի, այլ ոչ թէ մէկ այլ բանակի դէմ: Եթէ այդպէս է, ապա «Դադստան» հրթիռակիր նաւի տեղափոխումը կասպից ծով աւելի քան տրամաբանական է թւում:

Հարց է առաջանում, արդեօք չե՞նք դիտարկում Իրանի հետ յարաբերութիւնները որպէս ժամանակաւոր եւ մարտավարութեան տեսանկիւնից ձեռնտու, բայց ռազմավարական տեսանկիւնից նրա մէջ աւելի շատ տեսնում ենք հնարաւոր թշնամի եւ մրցակից, քան գործընկեր եւ դաշնակից:

Այս հարցով «Սովորոյնայ պրեսաս»-ն դիմել է ՌԳԱ Արեւել-լազիտութեան ինստիտուտի Մերձաւոր եւ Միջին Արեւելքի ուսումնասիրութեան կենտրոնի առաջատար գիտաշխատող Վլադիմիր Սոտնիկովին:

- Յարաբերութիւնները Ռուսաստանի եւ Իրանի միջեւ զարգանում են օրէցօր: Մինչ փութիւնի վերընտրուելը իրանցիները կազմինում կայացած ապրիլեան համաժողովի ժամանակ իրենց զարմանքն ու դժգոհութիւնն էին արտայայտել Ռուսաստանի C-300 համալրների վաճառքից հրաժարուելու վերաբերեալ: Նրանց զարմացրել էր այն, որ վերջին տարիներին Իրանի հետ յարաբերութիւններում մեր երկիրը դրսեւորել է կեցուածք, որը համահունչ է եղել արեւմտեան երկրների դիրքորոշմանը: Սակայն հիմա, երբ նախագահ է վերընտրուել փութիւնը, Իրանը մեծ յոյսեր է կապում այդ հանգամանքի հետ:

«ՄՊ»-Այսինքն, Ահմադինե-ժադը յամառօրէն ցանկանում է Մոսկուա այցելել Մեդվեդեւի օրօք սառած յարաբերութիւնները բարելաւելու համար:

- Մասամբ այո՛, քանի որ Իրանը ներկայումս գտնուում է բարդ իրավիճակում: Դեռեւս գործում են միջազգային պատժամիջոցները: Եւ եթէ չիրականանան նրա յոյսերը, որ առաջիկայում կը չաջողվի համաձայնեցնել որոշ դիրքորոշումներ Իրանի միջուկային ծրագրի շուրջը բանակցող «Վեցյակի» պետութիւնների հետ, ապա այդ

երկրի տնտեսական վիճակը էլ աւելի կը վատանայ:

Արդէն իսկ զգալի են տնտեսութեան անկման նախանշանները, գրանցուած են գնաճի զգալի տեմպ, միջին դասի եւ շարքային քաղաքացու օրէցօր վատացող վիճակ: Իրանցիները յոյսը կապում են Ռուսաստանի հետ: Կարծում են, որ ցանկանում են անմիջական ռազմավարական գործընկերութիւն հաստատել Ռուսաստանի հետ: Այդ մասին իրանական կողմը բացեիբաց խօսում էր դեռ Ապրիլին կայացած գազաթափոցովի ժամանակ: Ընդ որում իրանական դիւանագիտութեան յատկանշական գիծն այն է, որ իրանական կողմը հետապնդում է սեփական շահերը, ինչն էլ երբեմն մեծ վնաս է հասցրել ռուսական կողմին: Իրանը փորձել է շահարկել «Ռուսական քարտէզը», ոչ թէ հակառակը: Արդիւնքում մեր երկիրը կորցրել է իր դիրքերը միւս գործընկերների հետ յարաբերութիւններում:

Մերձաւոր Արեւելքի ինստիտուտի տնօրէն Եվգենի Սատանովսկու կարծիքն այլ է.

- Կասպից ծովում տեղակայուած ցանկացած ռուսական մարտական նաւ գտնուում է այնտեղ եթէ ոչ Իրանի դէմ, ապա գոնէ Իրանի համար գործելու, քանի որ հարուածն այդ երկրին կարող է տեղի ունենալ օպերատիւ ժամկէտներում, ինչն էլ կը յանգեցնի տարածաշրջանում արեւմտեան զօրքերի հասնուելուն: Նախ եւ առաջ՝ ամերիկեան: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է ուժեղացնել ռուսական սահմանն այդ ուղղութեամբ: Իսկ թէ այդ ամէնն ուղղուած է Իրանի, թէ՞ Իրանի դէմ կուրել պատրաստուողների դէմ, արդէն այլ հարց է: Փաստ է, որ այդ հզորացումն ուղղուած է հետխորհրդային հանրապետութիւնների դէմ, քանի որ հոյակապ յարաբերութիւններ են ձեւաւորուած Ղազախստանի եւ Ատրպէյճանի հետ, վատ չեն յարաբերութիւնները նաեւ Թուրքմենիայի հետ: Խօսելով կասպից ծովի շուրջը վէճերի մասին, հարկ է չիշել, որ տարիներ առաջ, 1943 թուականի պատերազմից յետոյ

Շարք էջ 18

ՀԵՌԱՏԵՍ
ԽԻՉԱՆ
ՅԱՆՁՆԱՌՈՒ
2012
1887
Ամեակ
125
ՍՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ
ՀԱՉԱԿԵԱՆ ԿՈՆՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Միջոցառումներ նուիրուած
Ա.Դ.Ն.Կ.-ի 125 ամեակին

Սեպտեմբեր 16, 2012
Հայաստանի Անկախութեան Փառատօն

Սեպտեմբեր 22, 2012
Ազգային Երգերու Երեկոյ

Հոկտեմբեր 27, 2012
Միօրեայ Գիտաժողով

Նոյեմբեր 18, 2012
125 Ամեակի Եզրափակիչ Հանդիսութիւն

Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ Ս. ՏԱՇԻՐ (ՍԻՄԱՆ ՀՈՎԻԵԱՆ)




ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Կուսակցութեան դժուարին պահերուն պատասխանատուութիւն վերցնելու պատրաստակամ նուիրեալներէն եղած է Ս. Տաշիր (Սիման Հովեան):

Ս. Տաշիր ծնած է Լոռիի Արդւի գիւղը, 1869-ին: Գիւղի ծխական դպրոցէն ետք, 1887-ին կ'աւարտէ Թիֆլիսի Ներսէսեան վարժարանը: 1890-էն ուսուցչութիւն կը կատարէ Պաքուի Մեսրոպեան եւ Հռիփսիմեան դպրոցներուն մէջ:

Երիտասարդ տարիքէն հակումներ ցոյց կու տայ դէպի գրականութիւն եւ արուեստներ: Կը գրէ բանաստեղծութիւններ, մաս կը կազմէ թատերախումբերու ինչպէս նաեւ, Գարա Մուրգաչի երգչախումբին, որուն հետ կ'ունենայ ելուցքներ եւ համերգային շրջապատներ: Գարա Մուրգաչի պատճառով կը ծանօթանայ գրող Ատրպետին (Սարգիս Մուսախանեան), որուն ազդեցութեան տակ 1891-ին կը մտնէ Հնչակեան կուսակցութեան շարքերը: 1892-1893-ին Միկիտան Եագոր ստորագրութեամբ գաւեշտական մանրապատմներով կ'աշխատակցի «Նոր Դար»-ին եւ «Զուռնա Տմբլա» երաժշտական թերթին: Այդ տարիներուն, Ս. Տաշիր, փրոկիմնագիտի եւ ուսանողական դպրոցներու աշակերտներէն կը կազմէ աշակերտական միութիւն մը: «Այդ խմբի հետ ես մօտ 4-5 տարի պարապում էի հայոց պատմութիւն, կարդում էի ֆեթերսպուրկի հայ ուսանողութեան հրատարակած ազատագրական բովանդակութիւն ունեցող (գլխաւորապէս պուլկարական ապստամբութեան ժամանակներից) գրքեր՝ յեղափոխական պրոչիւրներուց, առանց բացայայտ կերպով յայտարարելու իմ հնչակեան լինելու հանգամանքը՝ որովհետեւ գործը բացուելու դէպքում շատերը կարող էին հեռանալ իրենց ծնողների պահանջով, կամ ալ խոչընդոտների հանդիպել» - կը գրէ Ս. Տաշիր իր յուշերուն մէջ: (1) Աշակերտական այդ միութիւնը կը հրատարակէ Ս. Տաշիրի առաջին թարգմանական գործը, իտալացի գրող ձիովանիլոյի «Սպարտակ» վէպը, որուն 1500 տպաքանակը կը սպառուի շատ շուտով: Աշակերտական խումբէն գատ, Ս. Տաշիր կը կազմէ նաեւ աշխատաւոր պատանիների կազմուած երկու խումբեր Պաքուի եւ Սեւ Քաղաքին մէջ, որոնց հետ աւելի ունենայ նոյն պարապմունքները՝ ի հարկէ անոնց մտաւոր պատրաստութեան համապատասխան: «Այդ երկու խմբերն էլ արդիւնաւէտ «բժիշկներ» հանդիսացան մեր ապագայ հնչակեան կազմակերպութեան համար, թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս»:- (2) կը գրէ ան: 1894-ին, Պաքուի Մեսրոպեան եւ Հռիփսիմեան դպրոցներուն մէջ պաշտօնավարող, նախկին Ներսէսեանցի խումբ մը երիտասարդ հնչակեան ուսուցիչներ՝ Ս. Տաշիր, Արամ Նազարէթեան, Սեդրակ Պալանեան, Սահակ Մատինեան, Սիսակ Օհանեան եւ Մկրտիչ Բեգլարեան, ինչպէս զբար ապրելու համար, միասնաբար կը վարձեն երեք մեծ սենեակներէ



բաղկացած բնակարան մը: Այդ չարկին տակ, երեկոները անոնք կ'անցնեն ազգային, գրական, հասարակական թէ քաղաքական կեանքը յուզող հրատապ նիւթերու շուրջ գրոցներով: Այդ երեկոներուն, մասնաւորապէս հանդիպումներէն գատ կը մասնակցին նաեւ գաղափարակից այցելուներ:

Շուտով այդ հաւաքը կը կոչուի «Օճախ»: «Յիշեալ խմբակցութեան հանրակացարանը՝ «Օճախ»ը, որոշ իմաստով, Պաքուի հնչակեան կազմակերպութեան անլեկալ ակումբն էր»: (3) Այդպէս կը պատահի ինքնա-

բերաբար, առանց նախածրագրումի: Նոյնիսկ Պաքուի «Ընկեր» մասնաճիւղը կը բողոքէ:

Կեդրոնական վարչութեան, որ իր շրջանէն ներս, առանց իր գիտակցութեան սկսած է գործել կուսակցական այլ մասնաճիւղ մը: Այս հարցը շուտով կը հարթուի:

«Օճախ»ը կ'ունենայ իր «արտասահմանեան» հիւրերը, որոնց շարքին՝ կուսակցական առաջնորդութեամբ Թիֆլիսէն Պաքու ժամանած Ղազարոս Աղայեանն ու Յովհաննէս Թումանեանը: Հայ երկու մեծանուն գրողներուն կողքին, «Օճախ»ի հիւրը կ'ըլլան եւ անոր «պատուաւոր անդամ» կը նշանակուին Շիրվանզանդէն, դերասան Գրիգոր Աւետեանը, հրապարակախօս Սիմոն Հախումեանը եւ ուրիշներ: «Օճախ»ի երեկոյթները կ'ընդարձակուին եւ անոնք տեղի կ'ունենան նաեւ տարբեր բնակարաններու եւ վարձու սրահներու մէջ:

Կ'ընտրուի քաղաքի վարչութիւն՝ Ս. Տաշիրի գլխաւորութեամբ:

Կը կազմուին մեծ թիւով խումբեր ինչպէս նաեւ օժանդակ խումբեր: Կը կազմակերպուին նաեւ հասցեալներ ձեռնարկներ, որոնց հասցիքը կը փոխանցուի կուսակցութեան կեդրոնական վարչութեան: Հրապարակային ձեռնարկները տեղի կ'ունենան որեւէ բարեսիրական նպատակի անուան տակ, իսկ խումբերու հանդիպումները՝ գաղտնի: Ս. Տաշիր կ'անդամակցի եւ աշխոյժ գործունէութիւն կ'ու-

նենայ նաեւ Պաքուի Մարդասիրական Ընկերութեան մէջ: Պաքուի շրջանի կուսակցական կեանքի բուռն վերելքը իր վայրէջքը կ'ապրի 1896-ին: Այդ թուականին Պաքու կը հասնին համիտեան ջարդերէն ձողողաբաժ հայ գաղթականները. կը ձերբակալուի ու կ'աքսորուի Թիֆլիսի հնչակեան ղեկավարութիւնը. կուսակցութեան Ա. համագումարին կ'արձանագրուի պառակտում: Այս բոլորը ժխտական կ'անդրադառնան Պաքուի եւ ընդհանրապէս Անդրկովկասի հնչակեան շարքերուն վրայ: Ընթացք առած բարոյալքումին առաջին անգամը եւ շարքերուն նոր եռանդ տալու համար, Պաքուի հնչակեան վարչութիւնը 1897-ի ամրան կ'որոշէ Ս. Տաշիրը որպէս լիազօր գործիչ ուղարկել գաւառային շրջանները:

Ս. Տաշիր իր ուղեւորութիւնը կը սկսի Թիֆլիսէն, որն ինչպէս ըսինք, ղեկավարութեան ձերբակալման պատճառով մնացած էր «անգլուխ»: Ապա կ'անցնի Զաւարթ, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ, Կարս ուրիշ կայի մէջ կը մտնէ Կաղզուանի հետ, Ղարաքիլիսէ, Պաթում եւ Արդւի: Դժուարին էր այս շրջապատը. որովհետեւ, ինչպէս իր յուշերուն մէջ կ'եզրականցնէ Ս. Տաշիր. - «Երեկոյթն ընդհանուր էր, համատարած. ոչ մի ելակէտ չէի կարողանում գտնել,

Շարք էջ 17

ՆՈՐ ԷՋ ՍԸ ՓԱՐԱՄԱՁԵՆ

Ծ.Խ. Հնչակեան արխիւին մէջ կը գտնուի ըստ երեւոյթի աւելի երկար գրութեան մը երկրորդ էջը: Գրութեան առաջին եւ վերջին էջերուն քացակայութեան պատճառով, գրութեան հեղինակը, թուականը եւ գրութեան ինչ բնոյթ կրելը (նամակ, գեկուցագիր, յօդուած, եւ այլն) յստակ չէ:

Սակայն արխիւին ուշադիր ընթերցումը կը պարզէ որ ան Փարամագի ձեռագիրն է ու Փարամագի ոճը: Այդ գրութեան է նամաշարքային Ա. պատերազմէն անմիջապէս առաջ, մինչեւ 1914 Յուլիսը՝ երբ տակաւին ձեռքակալուած չէին Փարամագի ու հնչակեան ղեկավարութիւնը եւ շատ հաւանաբար ան կը կազմէ Փարամագի կողմէ տրուելիք դասախօսութեան մը սղագրութիւնը:

Ստորեւ տրուած փաստաթուղթը մեկնաբանութիւններու չի կարօտիք եւ այդ կը տպագրուի առաջին անգամ ըլլալով:

2. քաշխման վրայ: . . . Բաղէշ ստեպ քրտական արշաւախմբերին ենթակայ ըլլալով, ժողովուրդը միշտ ահ ու դողի մէջ անճանակալ ապահովութեան գուրկ է... Տիրապետակերպ կը տագնապէ ֆերրատ բոնաւորին ձեռքէն: Վանայ ժողովուրդը Թիմուկան պէկերէն... Վրացուց գաղթականութեան պատճառաւ այլ եւ այլ հայաբնակ բաղաններէն, անիրաւութեանց տեսարան եղած են Երզնկան, Բէնկիան, Զմառա, Եղդնիա, Բալու, Եւայլն, Եւայլն»: Ահա՛ օսմանեան խոստում...

Դեռ իր քիստեան խոստումի՝ Օսմ. ազգ. Սահմանադրութեան, առաջին նիստը չփակուած, տ. Ահմէտ Ռիզայի, Խալիլ պէյի, Թալեաթի... ձեռքով Ատանան ու ատանանք ստեղծուեց:


Քեազըմ Կիւնտօղան/Նեգահաթ Կիւնտօղան, «Ռատիֆայ» Հայացուց Գրիգոր Կէօֆեան,

Տերսիմի կոտորածներուն (1937-1938 թուականներուն, Գ. Կ.) ականատես եղած էր հայ աղջնակ մը՝ Ասլըհանը: Երբ Գոնիա կ'աքորէին զինք, հագիւ թէ 5-6 տարեկան էր, եւ անունը այլեւս «Ֆաթիմա» եղած էր: Ներառեալ գաւակները, բոլորը զինք իբրեւ քիւրտ ճանչցած էին: Տերսիմի կորստած հայ աղջիկներէն առաջինն է ան, որ կը յայտնուի տարիներ ետք... Հարկորի վանք գիւղի բնակիչները երբ կը կոտորուէին, փոքրիկն «Ասլըհանը», իր բացատրութեամբ, «գինեալի» մը կողմէ փրկուած էր՝ զինք ցորենի դէզերու տակ պահելով, եւ ան իր թաքստոցէն սարսափահար աչքերով ականատեսը եղած էր հաւառ կոտորածին... Հօրաքրոջը՝ Իհաս (հաւանաբար՝ Եղսա) Քիրեմիտեանին եւ անոր երեք գաւակներուն հետ միասին կը տեղահանուին դէպի Գոնիայի Պէյշէհիր գաւառը: Երբ հայ Ասլըհանը կը վերափոխուէր թուրք «Ֆաթիմա»-ի, 5-6 տարեկան էր, իսկ երբ իսլամացնելով՝ կ'ամուսնացնէին, հագիւ թէ 13 տարեկան էր... Հօրաքրոջը երեք գաւակներն ալ (Նշան, Աբգար եւ Մուրատ) իսլամացնելու նպատակով թրփատուեցան Պէյշէհիրի մէջ...

Հայ Ըլլալը Պահեց
Տարիներով գաղտնի պահեց իր հայու աղջիկ ըլլալը... Ինքնութեան մէջ Յակոբ Երեւցող հօր անունը «էյուպ» ըրաւ իսկ Հաւաս Երեւցող մօր անունն ալ »Հաւա«... բոլորը զինք իբրեւ քիւրտ ճանչցան, ներառեալ՝ գաւակները, մինչեւ այն օրը, երբ 2010 թուականին աղջիկը ուզեց իրենց ընտանեկան ծառը վերականգնել...

2009 թուականին, երբ մամուլը առաջին անգամ կ'արձագանգէր «Տերսիմի կորստած աղջիկները» վաւերական ժապաւնիին, հասարակութիւնը տակաւին անտեղեակ էր «Տերսիմի կոտորածին» մասին, եւ չէր քննարկուէր այդ հարցը ընդհանրապէս. իսկ Տերսիմի կորստած աղջիկները անձանօթ նիւթ մըն էր... Ծրագիրին սկզբնական փուլերուն կոտորածին ականատեսներն ու անկէ տուժածները կը զգուշանային տեսակցիլ եւ վկայել այդ նիւթին մասին, հիմա անոնք են, որ մեզ կը փնտռեն եւ կ'ուզեն պատմել...

Կորսուած Ընտանիքի Աը Պատմութիւնը
Հարկորի վանքի Ասլըհան, երբ որոշեց 72 տարուան լուծեան վերջ մը դնել եւ խօսիլ, գաւակները սկսան պրպտել իրենց արմատները: Նախ եւ առաջ գտան բզկտուած եւ ցիրուցան եղած իրենց արմատներէն վերապրող ազգականները. յետոյ իրենց նման նոյն ճակատագիրը ապրած տերսիմցի կորստած աղջիկները գտնելու համար մեզի դիմեցին. այս պայմաններուն տակ էր, որ հատուցան մեր ուղիները:

Մօտաւորապէս 30 նահանգներու մէջ կատարած մեր փնտրութիւններուն իբրեւ արդիւնք՝ 150-ի չափ «կորստած աղջիկ» գտնուեցաւ. այս թիւին վրայ ամէն օր նորեր կ'աւելնան, եւ ամէն մէկ նոր տեղեկութեամբ մեր յուզումն ու հետաքրքրութիւնը կ'աւելնայ: Սակայն Ասլըհանին պատմութիւնը շատ իւրայատուկ է: Յարզ մեր գտածները ալեւի-քիւրտ կամ քրմանձ աղջիկներ էին, սակայն ան շրջանի երեւելի

հայ ընտանիքներէն մէկուն աղջիկն էր. եւ միմիայն իր բացառացիութեամբ չէր սահմանափակուէր զինք գտնելը, այլ կը կարեւորուէր նահապետական եւ ազդեցիկ հայ ընտանիքի մը կորստած պատմութեան բացառացիութիւնն ու արձանագրութեան...

Նախ Գնդապետի Աը Տուիմ
Սփարթայի մէջ կը բնակէր Տերսիմի կորստած աղջիկը. երեք ժամ տեւած մեր հարցազրոյցի ընթացքին իր ապրածները մանրամասնութեամբ պատմեց. սակայն, հակառակ մեր սպառիչ եւ հետեւողական պնդումներուն, արտակարգօրէն ջանք թափեց, որ «Հայ եմ» չըսէ. որովհետեւ տակաւին կը վախնար... Ասլըհան Քիրեմիտեանին բերնէն լսեմք համառօտ կեանքի պատմութիւնը՝ սկսելով Պէյշէհիրէն:

«Պէյշէհիրի մէջ նախ Գնդապետի մը տրուեցայ. Բայց երբ անոր պաշտօնը տեղափոխուեցաւ, զիս տուին պետական պաշտօնեայի մը՝ իբրեւ աղախին. հոն զիս գաւազանով այնքան ծեծած են, որ մասնաբաժնի կորստած են. երբեք բժիշկի չտարին. այդ տան մէջ

ապրած չարչարանքներու չդիմանալով՝ փախայ այդտեղէն: Հետագային ուրիշ ընտանիք մը առաւ զիս. անոնց մօտ ալ շատ չարչարանքի ենթարկուեցայ. 13 տարեկանիս ամուսնացուցին 35 տարեկան մէկու մը հետ (նախքան ամուսնանալս՝ իսլամացուցած էին): Անօթի, ծարաւ, զրկանքներով լի կեանք մը ունեցայ: Նախ եւ առաջ երեխայ մըն էի աւելին, անտուն, անտէր եւ անգործ էի: Փողոցները մնացի եւ այս պայմաններու տակ մեծցուցի գաւակներս:

Հայ Ըլլալս որոշ չափով դիտէի, բայց պահեցի. գաւակներս 1995 թուականին իմացան. ընտանիքս գտնելու համար շատ փնտրութիւն կատարեցիք, բայց ոչ մէկ արդիւնքի հասանք: 2010-ին աղջիկս մեր ընտանեկան ծառը վերականգնեց, ահաւասիկ, այդ ժամանակ իմացանք, որ անունս եւ ազգանունս փոխուած էին. անձնաթուղթիս մէջ անունս Ֆաթիմա, իսկ աղջկույթեանս մականունը Քիրեմիտեան կ'երեւին, սակայն իմացանք, որ բուն անունս Ասլըհան եւ ազգանունս Քիրեմիտեան էր, ինչպէս նաեւ՝ ծնած գիւղիս տեղն ու անունը: Աւելի վերջ գտանք քրոջս եւ հօրաքրոջս գաւակները. տեղեկացայ ընտանիքիս անցեալին մա-

սին. հայրս իր պետութեան հաւատարիմ հայ քաղաքացի մը եղած էր. քահանան էր Հարկորի վանքին եւ բաւականին ունեւոր մէկը: Հայրս աքսորած էին Պոլսի Մենկեն շրջանը եւ հոն ալ մահացած էր:

Դէպի Արմատներ
Ասլըհան Քիրեմիտեան առաջին քայլը նետեց, երբ իր իսկական ինքնութիւնը պատմեց գաւակներուն, իսկ երկրորդ քայլը՝ ապրած կեանքը մեզի հետ բաժնեկցելով. երրորդ քայլը նետած պիտի ըլլայ, երբ դիմում ներկայացնէ Ազգային Ժողովի աղերսագրերու յանձնաժողովին. իր փափաքն է, որ յանուն մարդկութեան եւ արդարութեան հաշիւ պահանջուի բոլոր անոնցմէ, որոնք իրեն այս ցաւերը ապրեցուցին...

Մօտերս լոյս աշխարհ գալիք մեր՝ «Տերսիմի կորստած աղջիկները» խորագրեալ գիրքին մէջ մանրամասն ձեւով տեղ պիտի տանք Ասլըհան Քիրեմիտեանի ողբերգական կեանքի պատմութեան:

Երբ ուղեւորութեան մը ելլէք դէպի ձեր արմատները, կրնա՞ք պատահիլ, որ ձեր մեծ հայրերն ու մեծ մայրերը, գաւակները կամ թոռները եղած ըլլան այս հողերուն վրայ ապրած հինաւուրց ժողովուրդի մը... Մի՛ վախնաք, մի՛ ամչնաք...

ARMENIAN COMMUNITY COALITION of Pasadena
and
Armenian Identity Harvest
present
The 5th Annual
ARMENIAN IDENTITY Festival
Celebrating *The 500th Anniversary*
of the First Printed Armenian Book
SUNDAY JULY 22, 2012
11:00AM-7:00PM • VICTORY PARK
2575 PALOMA STREET, PASADENA

FOOD • LIVE MUSIC • BOOTHS • CHILDREN'S ACTIVITIES
FREE ADMISSION + FREE PARKING

GOLD NECKLACE RAFFLE GIVE-AWAY
DONATED BY NOBLE JEWELERS

FOR MORE INFO CONTACT:
ARMENIAN COMMUNITY COALITION OF PASADENA
(626) 399-1799 • (818) 306-0413
www.acc-us.org

Follow us  

SPONSORS & SUPPORTERS

ԳՐՈՂԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

ՄԱՄՈՒԷՂ ԽԱՆԱԹԵԱՆ

Ժամանակն արուեստագետի գաճն է: Աստծու ձեռքում կաւը մարդ դարձաւ, արուեստագետի ձեռքում՝ ժամանակ: Երկուսին էլ արարչական շունչ պիտի տալ, որ ապրեն, յարատեւեն:

Արուեստագետի տաղանդն է ժամանակին շունչ տուողը, որքան տաղանդաւոր, այնքան՝ երկարակեաց:

Նորութիւն չէ՝ իւրաքանչիւր ստեղծագործութիւն հեղինակի ապրած ժամանակում տիրող բարքերի ու ձեւաւորումն աշխարհայեացքի արգասիքն է նաեւ, քանզի բարքերի եւ հոգու վիճակը նոյնն է թէ՛ հանրութեան եւ թէ՛ նրա մի մասնիկը հանդիսացող աուեստագետի համար:

Գանք մեզ: Հայն ու ժամանակը իւրօրինակ դրսեւորում ունեն: Մեր ժողովրդի նկատմամբ ժամանակը, մեծ հաշուով, միշտ թշնամաբար է եղել, մենք միշտ կուր ենք տուել ժամանակի դէմ, որ չոչնչանանք, մնանք պատմութեան մէջ:

Հիմա էլ է այդպէս: 4-5 հազար տարուայ ընթացքում, ժամանակի եւ մեր միջեւ կուրը պարբերական-փուլային է, եւ այդ փուլի բնույթը մեր հպտան է, որի հերոսները յաղթում են, արարում, շէնացնում ու փակում են քարայրում:

Հիմա էլ է այդպէս: Հայ գրողն ի՛ր կուրը պիտի ունենայ ժամանակի հետ՝ երկու ճակատով. մէկը՝ մեծ ժամանակի դէմ, որպէս հայ, երկրորդը՝ ներկայի, որպէս գրող: Պիտի ունենայ, բայց մեր «հպտային» բնույթը խանգարում է մեզ:

Իւրաքանչիւր կրկնուող փուլի մէջ ծնւում են հերոսներ, նահատակներ, դաւաճաններ: Ամէն մի յաջորդող փուլում նախորդի հերոսները վարագուրում, խամբեցնում են դասալիք-դաւաճանների կերպարը, եւ յիշողութեան մէջ առաւել վառ պահում-պահպանում ենք միայն հերոսներին ու նահատակներին: Այդուհետ հերոսներին գերբնական ներկայացնելը դառնում է մեր ժողովրդի, մեր պատմութեան ու մեր գրականութեան նպատակը, իսկ նահատակների վրայ մշտապէս սուգ ու շիւան անելը, վախենամ, քրիստոնէական վարք չէ, այլ՝ ազգային բնաւորութիւն: Եւ այսպէս, ամէն մի նոր փուլում՝ հերոս-նահատակ-

իրական, գործը թշնամու կերպար չկայ: Դրա համար էլ մեր հերոսները լիարժէք-իրական չեն, այլ՝ լիարժէք-գերբնական, չարքերի ու դեւերի դէմ կուր տուող, բայց ոչ երբէք իրական նախատիպերով գեղարուեստորէն լիակատար կերպարների՝ օտար-վայրագների եւ կամ նոյնազգի դաւաճանների՝ լլկողի, ազգային արժէքները ցաք ու ցրիւ անող, ոտնատակ տուողի դէմ: Եւ քանի որ իւրաքանչիւր ազգի ոգեղէն էութիւնը դարերի ընթացքում յղկում, ձեւաւորում, կարծրանում է իր իսկ ստեղծած բանահիւստութեամբ ու գրականութեամբ, դառնում նրա ազգային գաղափարախօսութեան հիմնական առանցքը, իրական կեանքում դար ու դարեր տուրք ենք տուել պատեհապաշտութեանը: Եթէ ռազմի դաշտում յաղթեցինք՝ անմիջապէս նետում ենք բարեկամանալու, մեր յաղթանակը կիսելու թշնամու հետ, ու գրականութիւնն

էլ արձագանքում է՝ չարի դէմ դիւցազնօրէն մարտնչող, բայց խաղաղասէր կերպարներով: Իսկ եթէ խաղաղ տարիներ են, ապա մեզանում ու մեր շուրջը թշնամի չկայ, ընդամէնը լրագրական յօդուածի բացասական կերպարներ են, բայց ոչ երբէք ժողովրդի դակատագիրը բախտախաղի դրած ներքին կամ արտաքին ոտիս, որին ցուցանելու եւ յաղթելու համար ժողովրդին օգնութեան պիտի համար գրողն ու նրա գրականութիւնը: Այսպէս, յարատեւօրէն, ինքնախաբէութիւն է արմատաւորում թէ՛ կեանքում, թէ՛ գրականութեան մէջ: Իհարկէ, ես չեմ բացառում արուեստագետի հրապարակախօսական ելոյթի անհրաժեշտութիւնն ու ուժը, բայց խօսքս գրողի կողմից ի՛ր եւ ի՛ր հերոսի ժամանակը ճանաչելու մասին է, մարդուն ժամանակի մէջ բացայայտելու մասին է:

Էսքիլեսի, Սոֆոկլեսի, Էվրիպիդեսի ողբերգութիւնները երեւան եկան պարսիկների դէմ յոյնների տարած յաղթութեան ժամանակ, հերոսական դարաշրջանում: Հոլանտական նկարչութիւնը ծաղկեց այն փառաւոր ժամանակաշրջանում, երբ երկիրը յամառութեամբ ու արիութեամբ ազատագրուեց սպանական լծից: Իսկ հայերի դարերով երազած անկախութիւնն ու թշնամուց դարերով ունեցած պարտութիւններից յետո՛յ՝ յաղթանակը, չբերութեան են մատնել հայ արուեստագետին: Ոմանք կ'ասեն՝ այդ անկախութիւնը թալանչիների լուծ բերեց, ու, էլի, ակնկալիքը կը ծոկն հրապարակախօսութեան դաշտ: Չխորանալով այդ իրողութեան պատմաբաղադրական վերլուծութեան մէջ, որպէս գրող, կարող եմ միայն ասել՝ դա էլ է համաժողովրդական ողբերգութիւն, ցնցում, եւ պէ՛տք է, պէ՛տք է, պէ՛տք է շարժի արուեստագետի գրիչն ու վրձինը՝ մեծ կտաւի մնայուն արժէք ստեղծելու համար:

Չկայ, երբեք էլ ծնուել մեր վէպէ պոպեան, մեր «Պատերազմն ու խաղաղութիւնը», մեր «Թշուառները», մեր «Խաղաղ Դոնը»: Մերը՝ մեր 30 հազար քառակուսի քիլոմետր բնակավայրի համար, բնիկների ինքնասիրութիւնը շոյող «Վարդանանքն» է, որը դասագրքերում թէ՛ եւ յիշատակում է սրանց կողքին, բայց դա էլ է նահատակների մասին: (Յամենայն դէպս, բուն պատմութիւնն այդ խորհուրդն ունի ու դրանից ազատուելն անկարելի է):

Մենք ռոմանտիկ ժողովուրդ ենք ու մերը քնարերգութիւնն է ու ռոմանտիզմը:

Վէպէ պոպեայի ականդոյթ ու մեծ դպրոց չունենք: Լաւ: Յուսանք՝ դեռ կը ծնուի կն սերունդը, ով կը յաղթահարի փոքր ժողովրդից ծնուած լինելու բարդոյթը: Իսկ մինչեւ ա՞յդ... Այսօր, երբ մեծ տէրութիւնները կրկին «կատուի խաղ, մկան մահ» են խաղում մեր հետ, հայ արուեստագետն իր ո՞ր ստեղծագործութեամբ է ուժ ու հաւատ ներշնչում ժողովրդին, որպէս զի դիմակայի հերթական այս փորձութեանը:

Պատերազմում յաղթած, անկախութիւն ձեռք բերած հնագոյն մի ժողովուրդ հեռանում է իր երկրից, դարաւոր հայրենիքից: Չլսուած, չտեսնուած ողբերգու-

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ» ԳՐԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄՈՌԱՑԻԱԾ ԷԶԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՐԵՐԹ ՄԱՖԱՐԵԱՆ

Հրաշալի պատմական աշխատութիւն է Յարութիւն Թ. Տէր Յովհաննէանի Նոր Զուղայի Պատմութիւնը:

Ընդհանրապէս ասուում է, որ Շահ Աբբասը Հայերին բերեց Իրան եւ նրանց կալաճներ եւ հնարաւորութիւններ ընծայեց եւ հովանաւորեց, ինչի արդիւնքում բարգաւաճեց եւ հարստացաւ Նոր Զուղան, հիմնականում իր վաճառականների հարստանալու արդիւնքում: Ասուում է նաեւ, որ Շահ Աբբասի միջոցով հայերի գաղթը Իրան բռնագաղթ էր, որի ընթացքում գոհնեցին հազարաւոր մարդ: Յարութիւն Յովհաննէանը պատմում է իրականութեան երկու կողմի մասին էլ: Թէ՛ նկարագրում է բռնագաղթը, թէ՛ հայերի հաստատումն ու բազաւաճումը Նոր Զուղայում: Նա բացատրում է Շահ Աբբասի հակասական եւ երկկողմանի, բարօրացական եւ միաժամանակ բռնապետական, վերաբերմունքի պատճառները:

Սաֆաւեան թագաւորութեան վերջին արքայ՝ Շահ Սուլթան Հուսէյնի օրերից սկսում է Նոր Զուղայի անկումը. վաճառականները եւ արհեստաւորները սկսում են թողնել Զուղան եւ գաղթել Բուշէհ, Բասրա եւ այլ համեմատաբար ապահով քաղաքներ: Նրանց բնակարանները մնում են թափուր եւ քաղաքն սկսում է աւերել, բնակչութիւնը պակսել: Գաղթողները չէին կարողանում վաճառել իրենց տները կամ ծախել տան կահկարասին: Ահա այս մասին հետեւեալն է գրում «Պատմութիւն Նոր Զուղայի» հեղինակը. «...չորեքպատիկ վարձով ջորեպաններ վարձելով, գիշերային մէջ ելնելով՝ հեռանում էին Զուղայից, իրենց ճամբորդութիւնը կատարում էին գոյգ իջեւաններով եւ փութարշաւ, որ չլինի թէ փնտուղները հետապնդեն նրանց, բռնեն եւ վերադարձնեն Զուղա: Իրենց տներից մեկնելու ժամանակ փակում էին դուռը եւ բանալին ձգում էին տանիքները, բոլոր կարասիները լքելով դրանց մէջ եւ իրենց հետ վերցնելով միայն թեթեակշիռ եւ թանկարժէք ստացուածքներ»:

Զուղայի դէմ հալածանքն ու ճնշումները Նադեր Շահի օրօք հասնում են իրենց գագաթնակէտին, սակայն Քեարիմ Խանի ժամանակներում քիչ թէ շատ մեղմանում են: Շահ Աբբասի օրօք հայերի բռնագաղթի եւ Իրանի սահմանադրական լեղափոխութեանը հայերի մասնակցութեան միջեւ ընկած համարեա երկու դարերի մասին քիչ բան գիտենք եւ այս գիրքը այդ առումով վստահելի աղբիւր է համարուում:

Կրօնափոխութեան սպառնալիքը գալի է եղել բոլոր շրջաններում: Դա, երեւի, բնական է եղել մուսուլման երկրում ապրող քրիստոնէայ բոլոր համայնքների համար: Սակայն սկսած Շահ Աբբասի



ժամանակից, դա չի եղել ընդհանուր քաղաքականութիւն: Յամենայն դէպս, «Պատմութիւն Նոր Զուղայի» գրքում բազմիցս խօսուում է «ուրացողներ»-ի մասին եւ ասում է, որ նրանց կողմից աւելի մեծ բռնութիւններ են գործադրել Զուղայի հասարակ հայ բնակչութեան նկատմամբ: Ապակեգործների դէպքը (գլուխ 57) եւ Լոյս Գրիգորի նահատակութիւնը (գլուխ 29), սիմուլիկ պատմւմներ են, որոնք վկայում են կրօնափոխութեան վտանգի միշտ ներկայ սպառնալիքի մասին մասին:

Իսկ երբ օտար, քրիստոնէայ պետութիւնների հետ պատերազմ էր լինում, հայերը, որպէս քրիստոնէաներ, կասկածի էին ենթարկուում, որ հաւանական է օգնեն թշնամուն եւ ստիպւած էին խիստ պնդումներով, նամակագրութիւններով եւ այլ միջոցներով ապացուցել, որ այդպէս չէ: Այս մասին լաւ օրինակ է 1856-ին տեղի ունեցած Իրանի եւ անգլիացիների միջեւ կուրը (գլուխ 66):

Տէր Յարութիւն Յովհաննէանը իր գիրքը շարադրելիս, հետաքրքրւած է միայն իրականութիւնները արձանագրելով, եւ շատ լուրջ հետեւում է պատմագրութեան այս սկզբունքին: Նա հոգեւորական է, բայց այս գրքում հրապարակ չի գալիս որպէս քրիստոնէայ քարոզիչ, այլ որպէս անաչառ պատմաբան: Այս գրքում չկայ մերօրեայ իմաստով ազգային գաղափարախօսութիւն՝ անկախ հայրենիքի ստեղծում կամ վերադարձ Հայաստան: Մեր օրերի պէս, եթէ գնում էին Զուղայից, գնում էին աւելի հեռու: Չկայ բռնութիւնների դէմ պայքարելու միտում, կայ միայն գլուխը պահելու, գոյատեւելու հարց եւ ժողովրդի օրաւոր աղքատացում:

Իհարկէ չմոռանանք, որ խօսքը ֆէոդալական միապետական բռնակալութեան մասին է, ուր կամայականութիւնները եւ առօրեայ հայածանքը, կեղեքումները եւ հարկահաւաքները օրէնք էին եւ դրանց էր ենթարկւած երկրի ողջ բնակչութիւնը, ոչ միայն հայերը: Միայն թէ հայերի համար կրօնական տարբերութիւնը մի աստիճան եւս ծանրացնում էր նրանց վիճակը:



**ՄԱՐԴՆ Է ՈՐ ԿՎՊՐԻ ՄԱՐԴՈՑ ՄԷՋ
ԻՐ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՋՍ՝
ՅՈՎԻԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՎԱՂԱՅԱՍ ՄԱՅՈՒՆ ԱՌԹԻ**

ՊԵՐՋ ՊԵՔԵԱՐԵԱՆ

Մահը կեանքին վերջակէտը կը համարուի:

Մի քանի օրերը քիչ են անշուշտ պատմութենէն վճիռ պահանջելու համար հանգուցեալ ընկերոջս գործին մասին, բայց շատ իսկ են՝ յստակօրէն տեսնելու մարդը, որ կար ու չկայ: Այլ մանաւանդ՝ իրենց հարազատ պատկերով եւ հոգիով դիտելու իր ընտանիքի անդամները, եւ գաղափարի ընկերները, որոնք ապրեցան իրեն հետ ու դեռ կ'ապրին:

Գէշ բան է սրտակից ընկեր մը թողելը: Աւելի գէշ թողումէն ետք իր մասին գրելը:

Անուշ, բարի անձ մըն էր: Կրունկներուն վրայ ամուր կոխելով քալողներէն չէր: Կը սիրէր ոտքին մատներուն վրայ կոխելով յառաջանալ, եւ այդ զգուշաւորութիւնը ինքնավստահութեան պակասը չէր անկասկած, այլ հիւանդագին չափերու հասած փափկանկատութիւնը:

Լուռ ու աննշմար ծառայութիւններու մարդ էր ան, պէտք եղած ատեն միշտ ներկայ եղող ու իր ներկայութեամբ օգտակար հանդիսացող միութենական ու կուսակցական գործիչ էր ան:

Բնաւորութեամբ վերապահ, արտաքինապէս անմատչելի, մեծ գեղումներէ հեռու, բայց իր լայն մտապաշարին հետ ունէր նաեւ փափուկ սիրտ, լաւագոյն զգացումներ եւ մանաւանդ հասկացողութեան ոգի: Իր խօսքը չունէր կիրք, յոյզեր չէր արթնցներ, բայց տրամաբանական էր մտածողութիւնը:

Զգուշաւոր էր ան, հետամուտ կիրքեր չստեղծելու կամ անոնց զարկ տալու, բայց ունէր տեսակէտ ու կը պաշտպանէր առանց վիրաւորելու հակառակորդը: Մեղմ էր եւ չափաւոր իր արտայայտութիւններուն մէջ եւ միշտ պատրաստ՝ հաշտ ու խաղաղ գործակցութեան:

Երբեք չեմ տեսած երիտասարդ մը, որ այնքան շատ կարգացած ըլլայ, եւ իր կարգացածը այնպէս դիւրութեամբ մարսած: Զկար պատմական, ազգային, ընկերային կամ փիլիսոփայական գիրք մը, միջազգային հեղինակութիւն մը, որուն ծանօթ չըլլար:

Ուսուցիչ էր բոլոր անոնց համար, որոնք կ'ուզէին սորվիլ ու օգտուիլ իրմէ, իր մտային պաշարէն, որմէ կու տար սիրով, խանդավառութեամբ եւ մանաւանդ համեստութեամբ: Աշակերտ էր ամէն անգամ, որ բան մը եւս սորվելու առիթը գտնէր, ամէն անգամ, որ նորութիւն մը կար ըստածին ու խօսուածին մէջ, թէկուզ խօսողը երախայ մը ըլլար: Կը բաւէր, որ



զրուցակիցը ըլլար ազնիւ, ուղղամիտ, միտքն ու հոգին բարի: Իսկ ո՛վ կրնար ազնիւ չըլլալ դիմացը անձի մը, որ բարութեան մարմնացումն իսկ էր:

«Լուսաւոր դէմք» մը լուռ ու մունջ հրաժեշտ տուաւ այս կեանքին, ինչպէս որ ապրած էր լուռ ու մունջ, համեստութեան մէջ, առանց աղմուկի, սիրուած ու յարգուած բոլոր գինք ճանչցողներէն:

«Լուսաւոր դէմք» մը: Բոլոր անոնք որոնք բախտը ունեցած են մօտէն ծանօթանալու իրեն, առանց բացառութեան, համակուած են խաղաղութեան, բարութեան եւ անկեղծութեան խառնուրդ այն յուզումով, որ առաւօտեան մաքուր լոյսը կ'արթնցնէ իր հոգիին մէջ:

«Լուսաւոր դէմք» մը: Եւ անկասկած, լոյսի պէս ճերմակ հոգի մը ու նաեւ պայծառ իմացականութիւն մը, վճիռ իր խօսքով, եւ խօսքը՝ գաղափարներուն յստակութեամբ զօրեղ:

«Լուսաւոր դէմք» մը: Որ խառնուածքով դէմ էր ամէն ձեւի ցուցադրութեան, այս պատճառով միշտ հեռու մնաց յաւակնոտներէն, որոնք գրաւած էին հրապարակը այլազան պատկանելիութիւններու պիտակին տակ:

Ի՞նչ մնաց իրմէ, կէս մնացած ի՞նչ առաքելութիւն, ի՞նչ գործ՝ որուն ի տես խորտակուած այդ կեանքին առջեւ բազմութիւնները դեռ կը զգան, անփոխարինելի իր ներկայութիւնը իր պատկանած գաղափարի շրջանակէն ներս ու եռանդագին իր գործունէութիւնները, նախաձեռնութիւնները, ու հիմա կ'իստատ մնացած իր բոլոր ծրագիրները...:

Ի՞նչ գործունէութիւն, ի՞նչ նախաձեռնութիւն, ի՞նչ կեանք այլեւս այն կեանքին մէջ, թոհուբոհին, աննկարագրելի այն հսկայ բացին մէջ, որ լեցուց կիլիկեան Շրջանակի իր ժամանակագրութիւնը: Երկաթը կրնար հալիլ իր շրջապատին մէջ ստեղծուած դժոխ-

քին մէջ, իսկ Ընկեր Յովիկը ոչ երկաթ էր, ոչ ալ երկաթեայ անձնաւորութիւն, հայեցաւ ու զնայ ան անձայն ու անշուշտ:

Եւ սակայն բազմութիւններ կան, որ առանց արցունքի չեն կրնար յիշել գինք, դիտել իր պատկերը: Վճիռ ու պարզ հոգիներ կան, որոնց համար անանուն ու մնայուն ցաւ մըն է իր յիշատակը, ատենը մէկ կոտորացող վէրք մը: Բազմութիւնները, համբաւը կամ տիտղոսը չեն, այլ մարդն է, որ կը սգան, եւ մարդուն մէջ՝ մարդկային դժբախտութիւնը:

Ընկերս Յովիկը պարզ եղաւ՝ բայց սովորական չղարձաւ, իր պատկանած գաղափարի եւ այդ շրջանակին ցաւերով տառապիլ գիտցաւ, չափաւորութիւնը իրեն կաղապար ընտրեց եւ ծայրայեղութիւնները իր սրտին մէջ տեղ չգտան: Հաւատարմութիւնը, շիտակութիւնը եւ անկեղծութիւնը իր տարրերն էին:

Այդ ամէնը ուրիշներուն վրայ կրնային բարենիշներ դառնալ, սակայն իրեն համար եւ իր ծառայութեան շրջանին ծակող փուշեր եղան:

Տեսանելի ու անտեսանելի յորձանուտներու, խարակներու դէմ յանդիման գտնուեցաւ ան յաճախ: Եթէ անոնց ուժգնութեան եւ բրտութեան դիմաց երբեմն ընկրկումի, յուսալքումի եւ նահանջի ոռոգայթները իրենց ցանցը յաջողեցան տարածել իր հուսկէն ներս, բայց անոնք երբեք չկարողացան ընկճել, ամլութեան մատնել ներգոր բոցն ու կիրքը, որոնցմով առաջնորդուեցաւ ան՝ միութենա-

կան ու գաղափարական իր երկարամեայ ծառայութիւններուն ընթացքին:

Ընկերս Յովիկը կուսակցական դեկապար ըլլալէ առաջ, մարդ էր, եւ ըլլալէ ետք՝ մարդ մնաց:

Պարապ մը չթողեց իր ետեւը, թողեց հոգիներու մէջ միացող վէրք մը, ու չկայ սիրտ մը, չոր կամ գեղուն, բարեկամ թէ թշնամի, որ անտարբեր մնայ կայծակնահար ծառի մը դէմ, վաղահաս մահուան մը առջեւ:

Մարդոց սրտին գացող ամէնէն կարճ ճամբան՝ մարդկային դժբախտութիւնն է: Տարիներով կը պայքարինք մէկուն դէմ եւ այդ մէկուն բնական մահը թերեւս սուգի չի մատնեւ մեզ, բայց թող հասնի մահը անակնկալ հարուածով մը, ճակատագրի մէկ մուկ խաղով ու արդէն կ'ունենանք սրտի ճմլումը, որովհետեւ մարդ ենք:

Բոլոր իր գաղափարակիցները հաւասար չափով չափեցին գինք, բայց բոլոր սրտերը նոյն կակածանքով սեղմուեցան իր մահուամբ: Կսկիծը իր յիշատակին փակագիծն է՝ լաւ խօսին, թէ վատ խօսին միեւնոյնն է: Այլեւս իր անունը կ'արտասանուի տխրութեան խուլ շեշտով: Ու քանի շարունակուի ոգեկոչուիլ իր յիշատակը, ըստ ճաշակի ու խառնուածքի, խօսողը ով ալ ըլլայ եւ խօսուածը ինչ ալ ըլլայ, կսկիծով բացուած փակագիծը պիտի գոցուի, անպայման փստսանքով:

Մարդն է, որ կ'ապրի մարդոց մէջ, իր մարդկայնութեամբ:

Քու ընկերդ յաւերժականի մէջ իսկ...

Շրջապտոյտ դեպի
Լաֆլին եւ Կրեյն Գանցոն

JOIN HOMENMEN LADIES
for a trip to
LAUGHLIN AND GRAND CANYON
JULY 27TH - JULY 29TH, 2012

FRIDAY JULY 27
Bus Departing to Edgewater Hotel & Casino, Laughlin
From GLENDALE at 12:30 p.m. - 300 N. Glendale Ave.
From PASADENA at 1:00 p.m. - 1060 N. Allen Ave.

SATURDAY JULY 28
Morning departure to Grand Canyon
Including an IMAX Movie of the Park
Tours to Sedona and the Catholic Church
Return in the evening to Edgewater Hotel & Casino

SUNDAY JULY 29
Return to Los Angeles

ADULTS \$225 • 18 & UNDER \$170
FOR MORE INFO, PLEASE CONTACT:
LENA 626-485-6434 • GARINE 626-755-4773

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէ՛ն հեռաձայնել՝
(626) 398-0506

Ս. ՏԱՇԻՐ (ՄԻՍԱՆ ՀՈՎԻՏԱՆ)

Շարունակում է 7-էն

նրանց իրախուսելու կամ քաջալերելու համար. մասան սպասում էր «Ազատ Հայաստան» տեսնել, իսկ դրա փոխարեն կոտորած, սարսափներ, կուսակցական պառակտում... Ի՞նչ նիւթ տար յեղափոխական գործիչը»:

Կուսակցական-կազմակերպչական բուռն գործունեություն կողքին, Ս. Տաշիրը կը շարունակէ իր գրական հետաքրքրությունները եւ նոյն տարին կը թարգմանէ Լերմոնտովի «Հաճի Աբրէք» պոէմը: 1898-ին բարձրագույն ուսումի համար կը մեկնի Գերմանիա:

Ուսման նպատակով իրեն կ'ընկերակցի Սարգիս Կասեան (Սարգիս Տէր Գասպարեան), որ նոյնպէս անդամակցած էր

Հնչակեան Կուսակցության: Այդ երկար ճամբորդություն առաջին հանգրուանը կ'ըլլայ Նոր Նախիջևանը, ուր ան կը հանդիպի հոն աքտորուած իր գաղափարակիցներուն՝ Ղ. Աղայեան, Ատրպետ, Ռ. Պէրպէրեան, Խ. Վարդանեան եւ այլն:

Լայփցիկի եւ Հալէի համալսարաններուն մէջ քիմիագիտության հետեւելու կողքին, Ս. Տաշիրը ամբողջապէս կը ներգրավուի կուսակցական աշխատանքներու մէջ: 1901 Հոկտեմբերին, Լոնտոնի մէջ կը մասնակցի Հնչակեան Կուսակցության Բ. Համագումարին: 1902-ին, դարձեալ Լոնտոնի մէջ կը մասնակցի Կուսակցության Գ. համագումարին՝ ուր փորձ կ'ըլլայ վերամիացնել յառաջ եկած «Հին» եւ «Վերակազմեալ» հատուածները: Ս. Տաշիրը կը նշանակուի Միացեալ Կեդրոնական Վարչութեան անդամ: (4)

1903 Սեպտեմբերին Լոնտոնի մէջ կայացած կուսակցության Դ. համագումարը (որուն կը մասնակցի նաեւ Ս. Տաշիրը), Ռ. Խանազատի (Նշան Ղամբուրեան), Բ. Վարազդատի (Յակոբ Թիւրաբեան), Ս. Ռուբէնի (Եփրեմ Կաճառեան) եւ Արամ Աչքաչաչեանի կողքին Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրէ Ս. Տաշիրը:

Նորընտիր Կեդրոնական վարչութիւնը, որուն երկու անդամները կը գտնուէին արտասահման (Ա. Աչքաչաչեան՝ Թուրքիա, Ռ. Խանազատ՝ Պարսկաստան), իր աշխատանքները կը սկսի ծանր մթնոլորտի մէջ: Համագումարէն անմիջապէս յետոյ, Վերակազմեալներու կողմէ կը սպաննուին Պաքուի եւ Պաթմի պատգամաւորներ Սաբունի (Սաղաթէլ Գէորգեան), Որսորդ (Տիգրան Իգմիրլեան) եւ Համբ (Արամ Գրիգորեան):

Կեդրոնական Վարչութիւնը, Ս. Տաշիրի ատենապետութեամբ (որ այդ շրջանի կուսակցական նամակներուն տակ կը ստորագրէ Գ. Բագրատունի ծածկանունով), (5) կը շարունակէ իր աշխատանքները: 1902-1904 «Հնչակ»ի մէջ լոյս կը տեսնեն յեղափոխական պայքարէն ներշնչուած Ս. Տաշիրի ոտանաւորները, ինչպէս նաեւ հայկական հարցին նուիրուած գերմանական մամուլէն կատարած թարգմանութիւններն ու հայ ազգ.-ազատագրական պայքարին մասին վերլուծական յօդուածները: 1904 Յունուար-Յունիս, Ս. Տաշիրը որպէս Հնչակեան կուսակցության Կեդրոնական Վարչութեան գործիչ, կը շրջի Անդրկովկասի մասնաճիւղերը, կը տանի քարոզչական եւ

կազմակերպչական աշխատանքներ ու կը կատարէ նուիրահաւաք՝ դէպի Երկիր գէնք փոխադրելու նպատակին համար: 1905 Սեպտեմբերին, Ս. Տաշիրը Փարիզի մէջ կը մասնակցի ՄԴՀԿ 5-րդ համագումարին ու կը պաշտպանէ կուսակցութիւնը մէկ ու միասնական պահելու տեսակէտը: (6) 1909-ին, քիմիագիտության մէջ դոկտորի կոչումով վկայուելէ ետք կը վերադառնայ Թիֆլիս եւ Ախալցխայի, Պաքուի ու Էջմիածնի մէջ կը կատարէ տարբեր աշխատանքներ: Այդ միջոցին կը շարունակէ իր հասարակական եւ կուսակցական գործունեությունը:

1915 Ապրիլ 4-7, Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ խորհրդաժողով Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն միջեւ: Ժողովին կը մասնակցին պատգամաւորներ Թիֆլիսի, Ատրախանի, Էնգէլի, Թաւրիզի, Պաթմի, Կարսի, Երեւանի, Շուշուի, Ելիզաւետապոլի, Ղարաքիլիսայի, Պաքուի, Էջմիածնի եւ Ալեքսանդրապոլի մասնաճիւղերէն: Ս. Տաշիրի կողքին (Էջմիածնի պատգամաւոր), ժողովին ներկայ կը գտնուին կուսակցության յայտնի դէմքերէն Մարս (Վահան Ղուկասեան), Լազո (Յակոբ Ղազարեան), Առաքել Պատմագրեան, Գուրուկ (Քրիստափոր Վարդանեան), Գուրգէն (Գարեգին Մկրտիչեան), Մալխաս (Գրիգոր Քացարեան), Էմիլ ճոն (Միքայէլ Ստամպոլցեան), Պանդուխտ (Միքայէլ Սէրեան), Սօսի Գուգարք (Արտեմ Նադիրեան), Ֆլորա Վարդանեան, Մոզպետ (Մելքոն Ասիլբէկեան), Իսահակ Հովեան (Ս. Տաշիրի եղբայրը), Շահէն (Ասատուր Ռոստոմեան) եւ ուրիշներ:

Ս. Տաշիրի նախագահութեամբ, գաղտնի պայմաններու տակ գումարուած խորհրդաժողովը, Համաշխարհային Ա. պատերազմի լոյսին տակ կը քննարկէ Անդրկովկասի քաղաքական եւ զինուորական կացութիւնը, կամաւորագրության հարցը, շրջանին մէջ կուս. մամուլ ունենալու հարցը եւ այլն: Ժողովը Անդրկովկասի, Ռուսաստանի եւ Պարսկաստանի համար կ'ընտրէ հինգ հոգինոց գործադիր մարմին մը, որուն մէջ կը մտնեն Ս. Տաշիրը, Լազո, Գուրուկ, Էմիլ ճոն եւ Գուրգէն: Գործադիր մարմինը, կամաւորական եւ զինուորական գործերը կարգաւորելու համար կը նշանակէ Ռազմական Խորհուրդ՝ կազմուած Երկաթէ (Արշակ Պապեան), Ս. Տաշիրի եւ Լազոյէ:

Միւս կողմէ, 1913 Կէօստէնչէի 7-րդ Համագումարէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը կը գտնուէր դժուարութեան առջեւ: Հարցը այն էր որ Կեդրոնական Վարչութեան երեք անդամներէն Փարամազ ձերբակալուած էր. Բ. Վարազդատ կը գտնուէր Փարիզ՝ եւրոպական շրջանակներուն հետ յարաբերութիւն պահելու եւ «Հնչակ»ը հրատարակելու համար.

Սապահ Գիւլեան, սկզբնական շրջանին Եփրատի եւ ապա ԱՄՆ-ի մէջ ամբողջապէս կլանուած էր գաղթաշխարհի մէջ կամաւորագրութեան եւ նուիրահաւաքի աշխատանքներով ու կը խմբագրէր «Երիտասարդ Հայաստանը»: Ի դիմաց թաւալվոր ընթացող դէպքերուն, Կեդրոնը նիստ գումարելու հնարաւորութիւն չունէր: Համագումարի մասին մտածելն անգամ աւելորդ էր: Այս պայմաններուն տակ, նկատելով որ արագընթաց

դէպքերու ծանրութեան կեդրոնը տեղափոխուած է Անդրկովկաս, 1916-ին Թուրքի մէջ գումարուած ԱՄՆ-ի արտակարգ պատգամաւորական ժողովը, արտասահմանեան մասնաճիւղերուն հետ համախորհուրդ, ռեֆերանտով Ռազմական Խորհուրդին կու տայ Կեդրոնական Վարչութեան ամբողջական լիազօրութիւն: (7) Յաջորդ տարի, 1917 Յունիս 16-ին, դարձեալ Թիֆլիսի մէջ գումարուած խորհրդաժողովը, որուն կը մասնակցէր նաեւ Ս. Տաշիրը, այս կազմին վրայ կ'աւելցնէ Վահան Մարսեանի անունը, (8) որն եւ իբրեւ ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութիւն կը գործէ մինչեւ 1924՝ Խորհրդային Միութեան տարածքին Հնչակեան կուսակցության լուծարքը:

1916-17, Ս. Տաշիրը մաս կը կազմէ Թիֆլիս հրատարակող կուսակցական օրկան «Գաղափար» թերթի խմբագրական կազմին, իսկ 1919-ին, դարձեալ Թիֆլիսի մէջ, կը խմբագրէ «Գործաւոր» թերթը:

Ս. Տաշիրի Ռազմական Խորհուրդի եւ ապա Կեդրոնական Վարչութեան անդամութեան տարիները, 1915-1924, Հայ ժողովուրդին, Հայաստանին ու ՄԴ Հնչակեան կուսակցության համար կ'ըլլան ամենէն փորձնաշատ տարիները՝ Հայկական Յեղասպանութիւն, թրքական բանակներու յարձակում Արեւելահայաստանի վրայ, ռուսական յեղափոխութիւններ, Հայաստանի Ա. Հանրապետութեան ծնունդ, հայ-թրքական պատերազմ, Խորհրդային Հայաստանի ծնունդ, ՄԴՀԿ-կոմիտերն յարաբերութիւններ եւ Հնչակեան կուսակցության լուծարք Խորհրդային Միութեան տարածքին: Իրադարձութիւններու այս շղթային մէջ, փորձել ներկայացնել Ս. Տաշիրի խաղցած դերը, կը նշանակէ վերաշարադրել պատմական ամբողջ ժամանակաշրջան մը՝ բան մը որ հեռու է մեր նպատակէն: Կարելի է միայն ամփոփել այդ Դժուարին ու փորձաշատ այդ շրջանին, Ս. Տաշիրի անուան մնացորդն կը հանդիպինք կուսակցական խորհրդաժողովներուն, դեկավար մարմիններու կազմերուն, համագաղտնի թէ միջ-կուսակցական ժողովներուն մէջ: Ու տրամադրելի սկզբնաղբիւրներէն դատելով, բոլոր պարագաներու տակ

ալ, Ս. Տաշիրը հանդէս կը բերէ հանդարտաբարոյ, հաւասարակշռուած, համեստ, յանձնառու եւ պարկեշտ գործիչի մը յատկանիշները: 1935-38, Ս. Տաշիրը, «Նամակ Խորհրդային Հայրենիքից (կամ Հայաստանից)», ընդհանուր խորագրին տակ կ'աշխատակցի «Հնչակ»ին:

Կը մահանայ Երեւանի մէջ, 1942-ին:

- *****
- ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹԻՒՆ**
1. Սիմոն Հովեանի Յուշերը: Հայաստանի Պետական Արխիւ:
 2. Նոյն:
 3. Արամ Ինճիկեան, «Յովհաննէս Թումանեան», հր. Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Մ. Արեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտ, Երեւան, 1969, էջ 377:
 4. Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՄԴ Հնչակեան Կուսակցութեան», Ա. Հ., Պէյրութ, 1962, էջ 278:
 5. ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ա. Գիտարձագրութիւնը. 1903 Նոյեմբեր 6: Հնչակեան արխիւ:
 6. Ա. Կիտուր, էջ 291:
 7. «Հրաւեր-Շրջաբերական Ուրբերող Ընդհանուր Պատգամաւորական ժողովի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Բոլոր Շրջաններուն», Պոսթոն, 1924 Յունիս 3: Հնչակեան արխիւ: ՄԴՀԿ Կանոնագրութիւններուն մէջ «ռեֆերանտում» հասկացութիւնը չկայ: Այսուհանդերձ, ըստ այս հասկացութեան, երբ համագումար հրաւիրելով Կեդրոնական Վարչութեան նոր կազմաւորացնելու հնարաւորութիւն չկայ, շրջաններու վարչի մարմինները, պաշտօնական մամուլագրութեամբ, իրենց վստահութիւնը կը յայտնեն խումբ մը դեկավար ընկերներու, որոնք կը ստանան հաւաքաբար իրեն Կեդրոնական Վարչութիւն գործելու լիազօրութիւն: Այս ձեւը, վերոյիշեալ պարագայէն գատ, օգտագործուած է երկու անգամ եւս՝ ՄԴՀԿ Ժ (1938) եւ ԺԱ (1965) համագումարներուն միջեւ ինկած միջոցին:
 8. «Շրջաբերական ՄԴ Հնչակեան Կուսակցութեան Ռուսաստանի Կովկասի եւ Պարսկաստանի Մասնաճիւղերի եւ Ընկերներին: ՀՀԿԿԿԿԿԱ, ֆ. 4045, ց.1,գ.6:

ԳՐՈՂԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Շարունակում է 15-էն

թիւն՝ համամարդկային պատմութեան մասին յաւերժօրէն (կամ որ նոյնն է՝ պատմականօրէն կրկնուող) նմանօրինակ բարբեր ու աշխարհայեացք ունեցող ժողովուրդից չի կարող համաշխարհային ճանաչում նուաճող գրող ծնուել: Գրողն իր ժողովրդին մեծ գաղափարներ պիտի տայ, իսկ ժողովուրդը այն իր ազգային գաղափարախօսութիւնը դարձրած՝ գրողին գէն ու աւելն տայ:

Հայ գրողն իր եւ իր ազգի ժամանակը փակի տակ է պահում: Էդ փակն էր կոտրել է պէտք, նա հատակի պատանքը պատուել է պէտք արեւաշխարհ դուրս գալ:

Այս հրամայականը եղել է ու այսօր էլ կայ հայ գրողի ու ժամանակի պայքարում:

Կեանքը...

Ազգային ինքնութեան եւ էութեան մասին յաւերժօրէն (կամ որ նոյնն է՝ պատմականօրէն կրկնուող) նմանօրինակ բարբեր ու աշխարհայեացք ունեցող ժողովուրդից չի կարող համաշխարհային ճանաչում նուաճող գրող ծնուել: Գրողն իր ժողովրդին մեծ գաղափարներ պիտի տայ, իսկ ժողովուրդը այն իր ազգային գաղափարախօսութիւնը դարձրած՝ գրողին գէն ու աւելն տայ:

Հայ գրողն իր եւ իր ազգի ժամանակը փակի տակ է պահում: Էդ փակն էր կոտրել է պէտք, նա հատակի պատանքը պատուել է պէտք արեւաշխարհ դուրս գալ:

Այս հրամայականը եղել է ու այսօր էլ կայ հայ գրողի ու ժամանակի պայքարում:

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱՆԻ ԴԵՄ, ԹԵ՞ ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐ

Մարտնակուած էջ 6-էն

առաջին անգամ ռուսական ձկնորսական նաւերին գնդակոծել էին իրանական սահմանապահ նաւերը: Ելնելով այս հանգամանքից, մեզ ոչինչ չի խանգարում ուժեղացնելու կասպիական նաւատորմը՝ յետագայում նմանատիպ ընդհարումներին ցիտակապիւր համար:

«ՄՊ»-Ի՞նչ հանգամանքներում կարող են սրուել յարաբերութիւնները մեր երկրներին միջեւ:

- Այդ հարցին անհնար է պատասխանել: Դա կարելի է վերահասցէագրել այն պետութիւնների դեկլարներին, որոնք մասնակցում են իրավիճակի զարգացմանը: Յայտնի է, որ մեր եւ վրաստանի միջեւ չպէտք է ոչ մի ռազմական հակամարտութիւն առաջանար, իսկ յետոյ նախագահ Սահակաշվիլին ինչ-որ պատճառով որոշեց հարուածել Հարաւային Օսիայում տեղակայուած ռուսական զորքերին: Այնպէս որ, ո՞վ կարող է ասել, թէ ինչ է պէտք իրանին եւ ինչ կարող է նա ձեռնարկել:

Կասպից նաւատորմի ուժեղացման ռազմական նպատակների մասին՝ Քաղաքական եւ ռազմական վերլուծութեան ինստիտուտի տնօրէն Ալեքսանդր Շարավիլինը.

- Իրավիճակը կասպից ծովում անհանգիստ է: Չի լաջողում պայմանաւորուածութիւն ձեռք բերել ջրատարածութեան բաժանման շուրջը: Այդ ծովի յատկում կան ածխաջրածնի մեծ պաշարներ: Իրանական կողմը ջրատարածութեան բաժանման տարբերակներ է առաջարկում, որոնք անընդունելի են միացած կողմերի՝ Ռուսաստանի, Ատրպէյճանի, Թուրքմենիստանի եւ Ղազախստանի համար: Սպառազինութիւնների մրցավազքը տարածաշրջանում Ռուսաստանը չի սկսել: Իրանը ուժեղացրել է իր ծովային ուժերը տարածաշրջանում: Բաւականին ամրապնդել է իր դիրքերը Ատրպէյճանը: Միւս պետութիւններն էլ աշխատում են հետ չմնալ: Ռուսաստանն այդ գործընթացում վերջինն էր: Սակայն մենք էլ ենք հիմա զբաղւում այդ գործով: Երկար ժամանակ կասպիցում մենք ունէինք շատ հին նաւեր: Այնտեղ

չկար նոյնիսկ մարտական լողորդների ստորաբաժանում: Հիմա իրավիճակը շտկում է, եւ ես դա նորմալ եմ համարում: Դա նման է պատուաստման, որ ոչ ոք ցանկութիւն չունենայ տարածայնութիւնները կասպից ծովում լուծել ուժի միջոցով:

«ՄՊ»-Բայց իրանից բացի, ուրիշ ո՞ր պետութիւնն ունի բաւականաչափ ուժ նման փորձ կատարելու համար: Ստացում է, մեր ջանքերը, նախ եւ առաջ, ուղղուած են հենց այդ պետութեանը զսպելուն:

- Նման հետեւութիւններ անելը հնարաւոր է եմ համարում: Կարծում եմ, որ մենք այդ տարածաշրջանում մեր ուժերն ուժեղացնում ենք ռազմական կայունութիւնը պահպանելու համար: Դա այնտեղ ուժի կիրառման բացառման առաջին երաշխիքն է իրանի դէմ, կամ ոչ իրանի դէմ՝ իրականում այնքան էլ կարեւոր չէ:

Աշխարհաքաղաքական ինդիքների ակադեմիայի նախագահի տեղակալ, ռազմական գիտութիւնների դոկտոր, առաջին աստիճանի կապիտան Կոնստանտին Սիվկովի կարծիքը.

- «Դադարտան» տեսակի նաւերի վրայ կարող են տեղադրուել հրթիռային համակարգեր, որոնց հրաձգութեան հասողութիւնը հաւասար է 250-300 քիլոմետրի: «Կալիբր-ՆԿ» հրթիռային համակարգը, որի մասին է խօսքը, ամերիկեան «Տոմհատուկի» նմանօրինակն է: Կարծում եմ, այն պնդումը, որ այդ նաւը ընդունակ է հարուածելու ցամաքային նշանակէտերին 2600 քմ. հեռաւորութեան վրայ, ուղղակի լրագրողի վրիպակ է, որը տարածել են նրա գործընկերները: Ոչ մի տեղեկագրքում դուք չէք գտնի տեղեկութիւններ, որ այդ համակարգն ընդունակ է կրակել նման հեռաւորութիւնների վրայ: Բայց նոյնիսկ 280 քմ. երկարութիւն ունեցող «ձեռքով» նաւը այդ տարածաշրջանում աւելորդ է: Ծովային նշանակէտերին հարուածելու համար դժուար թէ գտնուեն արժանաւոր օբիեկտներ: Այդ հրթիռների մարտական մասը կէս տոննա է, իսկ կասպից ծովում ամենախոշոր նաւի ջրածաւալը 1500

տոննա է: Հարուածի դէպքում այդ նաւից կը մնան մանր կտորներ: Եւ ես համարում եմ, որ «Դադարտան» նախատեսուած է ցամաքային նշանակէտերին հարուածելու համար: Բայց դրա համար էլ այն քանակի հրթիռները, որ կրում է այդ նաւը, բաւարար չեն մարտական գործողութիւնների համար: Այն թոյլ կը տայ, լաւագոյն դէպքում, հարուած հասցնել մէկ օբիեկտի, օրինակ՝ օդանաւակայանի կամ էլ հրամանատարական կէտի:

«ՄՊ»-Այդ դէպքում, ինչո՞ւ են նման նաւը տեղակայել կասպից ծովում:

- Այսօր ես նրա ներկայութեան անհրաժեշտութիւնն այնտեղ չեմ տեսնում: Եթէ ռազմական հակամարտութիւն լինէր իրանի հետ, ապա աւելի արդիւնաւէտ կը լինէր հարուածը Տու-95ՄՍ կամ Տու-160 հրթիռակիր ինքնաթիռներով, որոնք հաւասարազօր են «Դադարտանի» վրայ տեղակայուած հրթիռներին: Ինքնաթիռներն աւելի շատ հրթիռներ են կրում, շատ շարժունակ են եւ ունեն մեծ մարտական կայունութիւն: Հակառակորդին լուրջ վնաս հասցնելու համար բաւական է ընդամէնը 200-300 հրթիռների համագարկ: Դրան մեզ մօտ ընդունակ է միայն ռազմավարական աւիացիան: Բացի դրանից՝ այսօր իրանի համար բոլորովին էլ ձեռնտու չէ Ռուսաստանի հետ յարաբերութիւնների սրումը: Այդ երկիրն առանց այդ էլ միջազգային մեկուսացման մէջ է: Այդ պատճառով պէտք չէ ենթադրութիւններ անել մեր երկրների

միջեւ ռազմական հակամարտութեան մասին: Ես կարծում եմ, որ նման սպառազինութեամբ նաւը աւելի անհրաժեշտ է Ռուսաստանի այլ նաւատորմերի կազմում, Կասպիցում բացարձակապէս աւելորդ է:

Ըստ ամենայնի, դիտարկուած է նրա կիրառումը Կենտրոնական Ասիայի ուղղութեամբ, կամ էլ՝ Կովկասում իրավիճակի սրման դէպքում: Հակամարտութիւնները Հարավային Օսիայի եւ վրաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ շարունակում են միայլ: Եկէք նայենք, թէ ում վրայ կարող է ազդել այն նաւը հրթիռների թուիչքի 300 կմ հեռաւորութեան դէպքում: Դա իրանն է: Սակայն մենք պարզեցինք, որ նրան նման միջոցով գրոհելը չի մարտութիւն է: Հրթիռները կարող են ուղղուած լինել Ատրպէյճանի վրայ՝ 300 քմ խորութեամբ, կամ էլ վրաստանի վրայ՝ Դադարտանի տարածքով: Սակայն նման նաւը կարելի է ոչնչացնել հակառակորդի մարտավարական աւիացիայի ուժերով: Ղազախստանն ու Թուրքմենիստանն ուղիղ չենք դիտարկում՝ սա գրեթէ մեր տարածքն է: Կարծում եմ, որ այդ նաւը բերուել է կասպից ծով, քանի որ մեր երկիրը նախապատրաստում է Մերձաւոր Արեւելքում հնարաւոր հակամարտութեան, այդ պատճառով էլ ուժեղացում են մեր ուժերը այդ տարածաշրջանում: Կարծում եմ մեր դեկլարութիւնը գիտակցում է մեծ պատերազմի հաւանականութիւնը տարածաշրջանում:

«Ազգ»

REQUEST FOR PROPOSALS (RFP 7558) RECREATION PROGRAMS FOR YOUTH
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified community organization to provide recreation programs for youth at a public housing development. Copy of the RFP may be obtained beginning June 25, 2012 via www.hacla.org/ps or call 213-252-5405. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., 4th floor, Los Angeles, CA, 90057, until 2:00 P.M., (PST) July 27, 2012.

REQUEST FOR PROPOSALS (RFP 7565) PHYSICAL NEEDS ASSESSMENT
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to conduct a physical needs assessment and investment grade energy audit of its housing portfolio, including a 20-year action plan to bring each of the sites up to HUD standards for modernization and energy conservation standards. Copies of the RFP may be obtained beginning June 25, 2012 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., 4th floor, Los Angeles, CA, 90057, until 2:00 P.M., (PST), July 27, 2012.
7/5, 7/12/12
CNS-2335640#
MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1719-A THE FABRICATION AND INSTALLATION OF WROUGHT IRON SECURITY DOORS AND WINDOWS BARS AT (4) FOUR HOUSING DEVELOPMENTS
The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the fabrication and installation of wrought iron security doors and windows bars at (4) four housing developments. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Boulevard, 4th Floor, Los Angeles, CA 90057, until **2:00 P.M., Pacific Daylight Saving Time, August 3, 2012.**
7/5, 7/12/12
CNS-2339828#
MASSIS WEEKLY

ԳՆԱՐԱՏԱԳԻՐ
Մեծ ուրախութեամբ եւ գոհունակութեամբ կը կարդամ «Մասիս» շաբաթաթերթը ուր Հայրենիքի լուրերը լաւագոյն ձեւով կը մեկնաբանուին եւ ողջմիտ կերպով կը փոխանցուին մեզի: Իմ աղբիւրս «Մասիս»ն է:
Այսու կը շնորհաւորեմ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ վարչութիւնը եւ իրենց այս դժուարին գործի մէջ սահուն եւ յարատեւ բեղումնաւոր ընթացք կը մաղթեմ:

ԱՊԱԲԻՆՄԱՆ ՄԱՂԱՆՔ
ՍԻՄՈՆ ԱՂԱԶԱՐԵԱՆ վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը: Այս առթիւ Պէլլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնը շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթէ իր անդամին:

ՌԻՀԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՒՆՆԱԹԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած էջ 2-էն

արտագաղթի տեմպերը եռապատկուած են: Ունէ մէկին այս հեռանկարն աւելի է դուր գալիս: Կամ՝ հարցն ուրիշ կերպ դնենք: Ենթադրենք՝ դոնորները Հայաստանին 2 միլիարդ եւրօ տուեցին: Որեւէ մէկը հաւատո՞ւմ է, որ այս իշխանութիւններն այդ գումարներով ինչ-որ կոնկրետ հարց են լուծելու եւ թեթեւացնելու են երկրի վիճակը: Տիգրան Սարգսեանն իր վարչապետութեան օրօք յաջողացրել է 3 միլիարդ տոլարի վարկ վերցնել, ՀՀ շարքային քաղաքացիներին քա-

նիւն են իրենց մաշկի վրայ զգացել դրա ազդեցութիւնը, քանիսի՞ վիճակն է թեթեւացել:

Մի խօսքով՝ իշխանութիւնները յայտնուել են այն ձախորդ ֆոկոսներին վիճակում, ով կարծում է, թէ հրաշալի ֆոկոս (աճաբարային) արեց ու սպասում է ծափահարութիւնների, բայց փոխարէնը ծիծաղ ու սուլոցներ է լսում: Ֆոկոսը չստացուեց, եւ չարժէ մոռնալ (մեղադրել) գալ հանդիսատեսի վրայ: Աւելի լաւ է նախապատրաստուել յաջողին:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԶՈՒԱՐԹՆՈՑԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՏԱՃԱՐԸ

Շարունակուած էջ 13-էն

ըլլալով հաղորդուեցան Կայսեր ներկայութեան եւ իբր թէ յունադաւանութիւնը ընդունեցին: Թէ ո՛վ էր Հաղորդուող եպիսկոպոսը, Մարաքիա Պատրիարք Օրմանեան կ'ըսէ թէ այնպայման ինք Սեբէոսն էր, որ յաջորդ օր յանդիմանուեցաւ Կայսրին եւ Կաթողիկոսին կողմէ իր ըմբոստութեանը համար, եւ սակայն չզիջեցաւ, յայտնելով անոնց Ս. Գրիգոր Լուսաւորչէն իրեն կտակուած հայոց հաւատքը, որուն հաւատարիմ կը մնար:

Խեղադիրեալ եւ անկանոն տեղեկութիւններ ուզեցին Զուարթնոց Տաճարը քաղկեդոնական եկեղեցի անուանել, նոյնիսկ հայոց Թէոդորոս Ռշտունի իշխանի քաղաքական հակումներուն լոյսին տակ՝ հանդէպ Բիւզանդիոնի: Թէոդորոսի հոգը պիտի չըլլար այդ: Սակայն մեր պատմիչներու շարքը անընդհատ երբ հիասքանչ վկայութիւններով կը խօսին Զուարթնոցի մասին, այլեւս միւսները կը մնան մութին մէջ:

Դժբախտաբար Կոստանդին Բ. Կայսեր հրահանգով եւ Թէոդորոսի դրդումով Ներսէս Կաթողիկոս հարկադրուեցաւ 6 տարիներ հեռանալ Հայաստանէն ու բնակիլ Տալքի իշխան իր ծննդավայրը, իր ետին ապահով դարձնելով Զուարթնոցի պաշտպանութիւնը զայն վատահելով իր տեղապահին՝ Անաստան Ակոռեցի եպիսկոպոսին: Ներսէս վերադարձաւ Դուին եւ վարեց իր կաթողիկոսութեան մնացեալ տարիները մինչեւ 661: Իր վախճանումէն ետք իր փոխանորդը Անաստաս Ակոռեցի դարձաւ Հայոց Կաթողիկոս:

Ներսէս Կաթողիկոսի Հայաստանէն հեռանալը կը վկայեն ժամանակակից պատմիչները: Գնաց Տալք իր բնիկ վայրը ու հոն մնաց 653-659: Յովհաննէս Դրասխանակերտցի պատմիչը կը գրէ. «Սա (Անաստաս) սենեկապետ լեալ մեծին Ներսէսի եւ վերակացու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն գտանէր հրամանաւ Ներսէսի մինչեւ էր նա (Ներսէս) ի հալածանա ի գաւառին Տալոց»:

Իսկ 7-րդ դարու Սեբէոս պատմիչ կ'աւելցնէ թէ երբ Ներսէս Կաթողիկոս Դուին վերադարձաւ, շինարարութիւնը իր ձեռքով աւարտեց. «Յետ վեցերորդ ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր, եւ հաստատեցաւ յԱթոռ Կաթողիկոսութեան: Փութայր կատարել զշինուած եկեղեցւոյն գոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապատ քաղաքի»: Վերադառնալէն երկու տարի ետք Հայրապետը կը վախճանէր 661 թուին, եւ Յովհաննէս Կաթողիկոսի հաստատ խօսքերով «Եղաւ մարմինն ի հանգստարանի անդ, գոր իւրովի իսկ յօրինեալ էր, ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին»:

Թորոս Թորամանեան
Ճարտարապետ

Անկասկած Թորոս Թորամանեանի գլուխ գործոցն է Վաղարշապատի Սուրբ Զուարթնոց եկեղեցւոյ աւերակներուն վերջնական պեղումներն ու յատակագիծի վերականգնումը: Միայն 300 տարուան կեանք ունեցած է գմայլելի, բոլորաձեւ, եռաթաղ ու իր տեսակին մէջ եզակի այս Տաճարը, որ փլած է 10-րդ դարու երկրաշարժին հետեւանքով: Տաղանդաւոր ճարտարապետ Թորամանեանի 1978 թուին Երեւանի մէջ յետ մահու հրատարակուած «Զուարթնոց» անուն արժէքաւոր գիրքը Մնացականեանի հատորին

հետ միասին օգտագործած ենք սոյն յօդուածին համար:

Թորամանեան 1903-ին Հայաստան յատուկ այցի գնաց եւ գործակցութեամբ Խաչիկ վարդապետ Դադեանի, որ տեղուցն վրայ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմէ պեղումներ կը կատարէր, ձեռնարկեց Զուարթնոց Տաճարի քննութեանց, գանտնք աւարտելով 1905 թուին Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրիկ Կաթողիկոսի օրով: Իր առաջին տեղեկագրին մէջ, տպուած «Մուրճ» ամսագրի 1905-ի հինգերորդ թիւին մէջ, տուած է իր տեսութիւնը Տաճարի կառուցուածքային եւ ծաւալային համադրութեան մասին, վկայելով որ «տեղին վրայ մասամբ անադարտ մնացած է միայն յատակագիծը, որուն միջոցաւ համոզուեցայ, կ'ըսէ, որ գտնուած բեկորները բաւական պիտի ըլլային ամբողջ շէնքը վերակազմելու»:

Մնացականեանի համադրած հատորը թէ՛ պատմական եւ թէ՛ ճարտարապետական սպառիչ տեղեկութիւններ կը բովանդակէ, միշտ չիշելով եւ օգտագործելով Թորամանեանի անկրկնելի գործը որուն եզրակացութիւնը եղած է այն կառուցը որ ծանօթ է աշխարհին որպէս Զուարթնոցի Տաճարը: Հատորին մէջ կան մանրամասնութիւններ որոնք կը պակսին Թորամանեանի առաջին աշխատանքներուն մէջ, եւ սակայն երկուքը միասին կը կազմեն վերջնական խօսքը այդ հրաշալիքի մասին:

Մնացականեանի մօտ մանրամասնօրէն կ'երեւին Թորամանեանի մանրակրկիտ հաշիւները, որոնց համաձայն Տաճարի կեդրոնէն հաւասար հեռաւորութեան վրայ գետեղուած են չորս լայնանիստ եւ հաստ սիւները որոնց միացած են չորս կիսաբոլորակներ: Անոնցմէ մին «պոչ պատ մըն է եւ կը կազմէ Խորանը (Սեղանը), իսկ միւս երեքը սիւնազարդեր են»: Այս ձեւով Զուարթնոցի ներքին մասը, կ'ըսէ Թորամանեան, ստացած է «կիսաբոլորակներէ կազմուած խաչաձեւ մը՝ կեդրոնը ունենալով Մկրտութեան Աւագանը»:

Թորամանեան կը հիանայ Զուարթնոցի ճարտարապետին հանձարին եւ բազմակողմանի հմտութեան վրայ, որուն «գեղարուեստական ճաշակի մասին կը վկայեն նուրբ եւ գեղեցիկ քանդակները»: Ի վերջոյ Թորամանեան կ'ըսէ. «Այնպիսի վայելուչ կերպով խորշերն ու խոյակները իրենց տեղը գտած են որ այլեւս ճարտարապետի հանձարին եւ հմտութեան վրայ զարմանալի գատ մեզի ոչինչ չի մնար ընել»:

Թորամանեան ճարտարապետ Վաղարշապատ գալէն առաջ Անիի աւերակները այցելած էր Նիկողայոս Մառի հետ իր առաջին պեղումները կատարելու: Իր վկայութիւնը եւ առաջին տպաւորութիւնը հետեւեալն է անոնց մասին որոնցմով կը փակեմ իմ այս գրութիւնը:

«Երբ երկու տարի առաջ այցելեցի Անի, զարմանքով կը դիտէի չորս կողմն եւ չէի ուզեր հաւատալ տեսածներուս իրականութեան: Օր օրի հետաքրքրութիւնս կ'աւելնար եւ ամենէն անշուշտ քարակոյտերն իսկ բուն ուշադրութիւնս կը հրաւիրէին իրենց վրայ: Ամէն կիսափուլ շէնք, ամէն բլրացած հողակոյտ իր ծոցին մէջ առատօրէն պահած էր գեղաքանդակ սիւներ խոյակներ, պսակներ եւ խաչքարեր, որոնց առջեւ մեր բարեպաշտ քրիստոնեայ մամիկները ժամերով ծնկաչոք կուրծքերնին ձեծեր էին»:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ





Vahe Atchabahian
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
 626-354-5924 • vamedia@yahoo.com

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅՈՒՇԱՐՉԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ
 ԲԵՆԻԱՄԻՆ
 ԺԱՄԿՈՉԵԱՆԻ

Սրտաբուխ նուէրով գիրքն օրինակ մը ստանալու համար հեռ.աձայնել՝

(626) 797-7680 կամ
 (818) 429-2322 քիւերուն

Լարակագն, մարտի տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի մախկին սամերուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնին կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատմւը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:

Under the auspices of
AGBU Central Board of Directors




2012

AGBU-AYA | ՀԲԸԱ-ՉԵԸ
WORLD GAMES
LOS ANGELES

OPENING CEREMONY

Sunday July 29th, 2012 6:00 PM
Pasadena Community College Robinson Stadium
FREE ADMISSION



Hovhannes Shahbazyan




David Foster



Silva Hakobyan

Նովաթեոսյան Ն. Բ. Ը. Մ.
Կոնվուտսիան Կարգսիան Ժողովի Տնօրենը





2012


AGBU-AYA | ՀԲԸԱ-ՉԵԸ
WORLD GAMES
LOS ANGELES

VICTORY BALL


Saturday August 4th, 2012 6:00 PM
Universal Studios Backlot
Donation \$150




Master of Ceremony
KEY ORKIAN



Joseph Krikorian



Silva Hakobyan



Armenchik

GOLD SPONSORS



SILVER SPONSORS



OFFICIAL SPONSORS

